# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 16 (1766) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 30, 2016
VOLUME 36, NO. 16 (1766) SATURDAY, APRIL 30, 2016

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## Այս Թիւով

Օրօրա Մրցանակի Բաշխումը




էջ 5

Ապրիլ 24-ը Թուրքիոյ Մէջ




էջ 6

Ապրիլ 24-ը Լիբանանի Մէջ



էջ 8

Յակում Փասատինայի Մէջ



էջ 6

Մարդատարի Պայթում Երեւանի Մէջ



էջ 4

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 101 ԱՄԵԱԿԸ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՑՈՅՑԻ ՕՐ ՄԸ ԵՂԱՒ ԱՒԵԼԻ ՔԱՆ 60 ՀԱԶԱՐ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

*Անցնող շաբաթավերջին, բովանդակ աշխարհի հայութիւնը նշեց Հայոց Ցեղասպանութեան 101րդ տարեդարձը: Լոս Անճելոսի հայ գաղութը եւս անմասն չի մնաց յիշատակի եւ պահանջատիրութեան նուիրուած ժողովրդային զանգուածային միջոցառումներէն:*

*Այս բոլորի եզրափակումն ու կիզակէտը հանդիսացաւ Լոս Անճելոսի Թրքական հիւպատոսարանին առջեւ Կիրակի օր, Ապրիլ 24ին տեղի ունեցած համագաղութային «Արդարութեան Հանրահաւաքով», կազմակերպութեամբ Հայոց Ցեղասպանութեան Յանձնախումբին:*

*Թրքական հիւպատոսարանի մօտակայ Թաղամասի բոլոր փողոցներուն վրայ երթեւեկը արգիլուած էր ինքնաշարժներու համար, ուր տեղ գրաւած էին աւելի քան 60 հազար հայորդիներ:*

*Պատուոյ հիւրերու շարքին իրենց տեղերը գրաւած էին ԱՄՆ-ի Գոնկրէսի, Գալիֆորնիոյ Խորհրդարանի, Լոս Անճելոսի գաւառի եւ քաղաքի ղեկավար անձնաւորութիւններ, եկեղեցական դասը, հայ համայնքի ղեկավարներ եւ բազմատասնեակ հազարաւոր երիտասարդներ եւ ուսանողներ:*

*Հայ ժողովուրդի արդար դատին զօրակցող ներկայացուցիչներ*



**Հազարաւոր հայեր՝ համախմբուած Լոս Անճելըսի թրքական հիւպատոսարանին առջեւ**

*եկած էին նաեւ յոյն, ասորի, քիւրտ, եզիտի, հրեայ, հարաւ-ասիական եւ սիխ համայնքներուն կողմէ:*

*Հանրահաւաքի բացումը կատարուեցաւ հայ եկեղեցւոյ յարանուանութեանց չորս առաջնորդներու միացեալ աղօթքով, որուն յաջորդեց ԱՄՆ-ի եւ Հայաստանի քայլերգներու ունկնդրութիւնը:*

*Ցեղասպանութիւնը դատապարտող եւ պահանջատէր հայ ժողովուրդի արդար դատին ի նպաստ զօրակցական ելոյթներով հանդէս եկան գոնկրէսականներ Ատամ Շիֆ, Լօրեթթա Սանչեզ եւ Թոնի Գարտենաս, Գալիֆորնիա Նահանգի երեսփոխաններ Սքաթ Ուիլք, Ատրին Նազարեան, ինչ-*

Շար.ը էջ 5

# ՍԱՐԳՍԵԱՆ. «ՀԱՅԵՐՈՒ ՆՈՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՉԱՐՏՕՆԵՆՔ»

*Հայոց Ցեղասպանութեան 101-րդ ամեակի առթիւ, Ապրիլ 24-ի առաւօտեան ժամերէն սկսեալ, հազարաւոր հայեր, այցելուներ եւ օտարազգիներ ուղղուեցան Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, ուր յարգանքի տուրք մատուցեցին Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին: Ծիծեռնակաբերդի մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ հանդիսապետութեամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին:*

*Ծիծեռնակաբերդ այցելողներու շարքին էր նաեւ դերասան Ճորճ Գլունին, որ Հայաստան կը գտնուէր ներկայացնելու համար Օրօրա մրցանակը: Ան շրջեցաւ Ցեղասպանութեան Թանգարան-հիմնարկին մէջ, ծանօթացաւ անոր գործունէութեան եւ Օրօրա Մարտիկանեանի նուիրուած ցուցադրութեան:*

*Ցեղասպանութեան յուշահամալիր այցելեցին նոյն մրցանաբաշխութեան մասնակցելու նպատակով Երեւան ժամանած միջազգային հիւրերը եւ բարձրաստիճան անձնաւորութիւնները՝ ներառեալ երգիչ Շարլ Ազնաւուրը:*

*Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեան Ցեղասպանութեան 101-րդ տարելիցին առիթով իր յղած ուղերձին*



**Սերժ Սարգսեան եւ Ճորճ Գլունի՝ Ծիծեռնակաբերդի եղեռնի յուշարձանին մօտ**

*մէջ յայտարարեց, թէ Մեծ Եղեռնէն մէկ դար անց մենք վերածնուած ենք որպէս ազգ եւ որպէս պետութիւն: Մենք ապացուցած ենք մեզի եւ աշխարհին, որ թրքական ցեղասպանական ծրագիրները տապալուած են եւ արդարութեան յաղթանակի համար մեր պայքարը կը շարունակուի: Սարգսեանի խօսքով, մէկ դար անց չէ փոխուած պաշտօնական Թուրքիոյ ժխտողական կեցուածքը եւ թշնամական վերաբերմունքը հայկական ամէն ինչի հանդէպ: »Այս յանցագործութեան ուղղակի շարունակութիւնն է արդէն, մինչ մասամբ փոխուած է թրքական հասարակութիւնը, որ այսօր իր պատմութեան մասին*

Շար.ը էջ 7

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Վաղը ուշ կը լինի

*ՌՈԲԵՐՏ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆ*

Ովքե՞ր են Հայաստանում կայացնում ռազմավարական նշանակութեան որոշումները, ի՞նչ մեխանիզմներով են կայացւում այդ որոշումները, ովքե՞ր են այն անհատները, որո՞նք են այն համակարգերն ու ինստիտուտները, որոնք մասնակցում են այդ որոշումների կայացմանը… Հայաստանում ընդհանրապէս որոշումներ կայացւո՞ւմ են, թէ՞ ոչ:

Այս հարցերի պատասխանների փոխարէն՝ նորմալ պետութեան պայմաններում պէտք է լինէին բարձրաստիճան պետական պաշտօնեաների անուններն ու պետական կառավարման համակարգի համապատասխան կառոյցների անուանումները: Արդեօ՞ք ասուածը տեղին է Հայաստանի դէպքում: Բնականաբար ու դժբախտաբար՝ ոչ:

Օրինակ, երբ Նախագահ Սերժ Սարգսեանը որեւէ յայտարարութիւն է անում՝ ուղղուած, ասենք, Ռուսաստանին, Արեւմուտքին, Թուրքիային կամ աշխարհաքաղաքական որեւէ այլ ուղղութեամբ, արդեօք այդ յայտարարութեան հիմքում դրուա՞ծ են համապատասխան կառոյցների վերլուծութիւնները, հաշուարկները, սցենարները, դրանցից իւրաքանչիւրի ռիսկերի գնահատականները: Հազիւ թէ:

Ընդհանրապէս, տպաւորութիւն է, որ, յատկապէս ֆորսմաժորային իրավիճակներում, առանցքային որոշումներ կայացնում է Սերժ Սարգսեանն անձամբ, գուցէ շատ նեղ շրջանակի անձանց հետ խորհրդակցելով: Բայց գրեթէ վստահաբար կարելի է ասել, որ այդ որոշումների թիկունքում չկան ինստիտուտներ, վերլուծական կեդրոններ, չկայ համակարգուած աշխատանք:

Այն պարզ պատճառով, որ այդպիսի միաւորներ Հայաստանում պարզապէս չկան: Օրինակ, նոյն արտաքին քաղաքականութեան բնագաւառում կայացուող այս կամ այն, առաջին հերթին՝ արմատական որոշման դէպքում, կարելի՞ է արդեօք անգամ երեւակայել, որ ՀՀ արտգործնախարարութիւնը մասնակցում է դրա կայացմանը: Մասնակցում է ոչ թէ՝ բիւրոկրատական տեղեկանքներ տրամադրելով, այլ՝ լուրջ, վերլուծական, «ուղեղային» աշխատանքով: Այդ հարցի պատասխանը ստանալու համար բաւական է լսել արտգործնախարարի յայտարարութիւնները: Արդեօք ազգային անվտանգութեան ծառայութեան համապատասխան բաժինները զբաղւո՞ւմ են նոյնաբովանդակ աշխատանքով, որի արդիւնքը պէտք է լինի կայացուող ռազմավարական որոշումների գնահատականը, այս կամ այն որոշման հնարաւոր զարգացման սցենարը՝ դրական եւ բացասական ելքերով:

Օրինակ, այսօր հայ հասարակութեան մէջ միանգամայն արդարացիօրէն ու օբիեկտիւօրէն հարցեր են բարձրացւում՝ կապուած Ռուսաստանի հետ յարաբերութիւնների բնոյթի, այդ երկրի հետ դաշնակցային կապերի ձեւական ու բովանդակային կողմի, Ռուսաստանի ստեղծած ԵՏՄ-ից դուրս գալու, ընդհուպ՝ Հայաստանում գտնուող ռուսական ռազմաբազաների տեղակայման նպատակայարմարութեան հետ կապուած: Սրանք չափազանց կարեւոր հարցեր են, եւ իրաւացի են բոլոր նրանք, ովքեր պնդում են, որ այս խնդիրների հետ կապուած աւելորդ զգայականութիւնն անթոյլատրելի է:

Բայց բոլոր այդպէս ասողներն այսպէս են ասում ոչ թէ այն պատճառով, որ գիտեն այդ հարցերից իւրաքանչիւրի՝ այս կամ այն կերպ լուծման հետեւանքները, ոչ թէ այն պատճառով, որ կարդացել են համապատասխան վերլուծութիւններ ու սցենարներ այս կամ այն զարգացման վերաբերեալ, այլ, որովհետեւ այդ ամէնի բացակայութեան պատճառով առաջնորդւում են բնազդային վախով՝ ռուսներին չի կարելի նեղացնել: Բայց պետութիւնը պետութիւն պէտք է լինի նրանով, որ ունենայ եթէ ոչ՝ բոլոր, ապա՝ գոնէ գրեթէ բոլոր հարցերի պատասխանները, որպէսզի այդ հարցերին կարողանայ պատասխանել հիմնաւորուած՝ ներկայացնելով, թէ այս կամ այն որոշումը ինչ հետեւանքներ կարող է ունենալ:

Ասենք, առաջարկ է հնչում՝ դուրս գալ ԵՏՄ-ից կամ բարձրացնել Գիւմրիում տեղակայուած ռազմակայեանները Հայաստանից հանելու հարցը: Համապատասխան կառոյցների առկայութեան դէպքում պետութիւնը կ՚ունենար գոնէ մօտաւոր գնահատական-կանխատեսումներ, թէ ինչպիսի քաղաքական ու տնտեսական հետեւանքների կարող է հանգեցնել ԵՏՄ-ից դուրս գալը, կամ ինչպիսի ռազմաքաղաքական սպառնալիքներ կարող է պարունակել ռուսական ռազմակայեանի տեղակայման հարցի բարձրացումը: Այդ հարցերը պէտք է ունենային ոչ թէ՝ մէկ, այլ՝ առնուազն մի քանի պատասխաններ՝ իւրաքանչիւրի ռիսկերի ու հնարաւորութիւնների գնահատականներով:

Ակնյայտ է, որ Հայաստանում ոչ միայն նման համակարգեր չեն գործում, այլ, եթէ անգամ անուանապէս ինչ-որ միաւորներ կան, ապա դրանք ծառայում են ոչ թէ՝ ղեկավարների համար որոշումների պատրաստմանը, այլ՝ ղեկավարների ընդունած որոշումների «հիմնաւորմանը»: Ու ստացւում է՝ պետութեան համար կարեւորագոյն, ճակատագրական որոշումները կայացնում են չափազանց սահմանափակ թուով անհատներ, ինչը նշանակում է, որ պետութեան ճակատագիրը կախուած է ոչ թէ՝ համակարգերի, իրար հակակշռող համակարգերի, այլ՝ առանձին վերցրած անձանց, թէկուզ՝ ամենաբարձրաստիճան անձանց սուբիեկտիւ յատկանիշներից:

Տեխնիկապէս նման համակարգերի կայացումը գուցէ ոչ այնքան հեշտ է, սակայն անհնարին չէ: Ու հարց է առաջանում. ինչո՞ւ անցած երկուսուկէս տասնամեակների ընթացքում Հայաստանում նման ինստիտուտներ չեն կայացել: Պատասխանը շատ պարզ է. բոլոր իշխանութիւններն էլ, որոնք պէտք է նման համակարգերի ստեղծման պահանջարկ ձեւաւորէին ու դառնային դրանց «արտադրանքի» սպառողը, նման խնդիր չեն դրել:

Որովհետեւ բոլոր իշխանութիւնների խնդիրը եղել է եւ կայ, առաջին հերթին՝ սեփական իշխանութեան պահպանումը, եւ բոլոր քիչ թէ շատ գործող համակարգերը ծառայել են այդ խնդրին: Սա իշխանութիւնը պետութեան հետ նոյնացնելու արատաւոր երեւոյթի վկայութիւնն է, որի հետեւանքով ոչ թէ իշխանութիւններն են ծառայում պետութեանը, այլ հակառակը՝ պետութիւնն է հանդիսանում գործիք իշխանութեան համար:

Վաղուց հասունացել է պետութիւնն իշխանութիւնից տարանջատելու հարցը: Հակառակ դէպքում իշխանութեան՝ անցողիկ լինելու օբիեկտիւ յատկանիշը տարածուելու է նաեւ պետութեան վրայ: Վաղը ուշ կը լինի:

«168 ԺԱՄ»

# Ի՞նչ տեղի կ'ունենայ Հայաստանի կողմից Արցախի ճանաչման դէպքում

*ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՐԱՄԵԱՆ*

Այս օրերին շատ են հնչում ինչ անել, ինչով օգնել հարցերը: Եւ նորից ես պատասխանում եմ. ամէն ինչ հիմա հայ հասարակութեան խնդիրները ճիշտ ձեւակերպելուց է կախուած:

Նորից հարցնում են՝ ինչպէ՞ս ձեւակերպենք:

Պատասխանում եմ. հայ հասարակութեան համար մէկ խնդիրն է՝ ստիպել Հայաստանի իշխանութիւններին ճանաչել Արցախի անկախութիւնը:

Երկրորդ՝ այսօր աշխարհը պատրաստ է ճանաչել Արցախի անկախութիւնը, բայց պայման է դնում, որ դա առաջինը պէտք է անի Հայաստանը: Ինչո՞ւ:

Քանի որ 1991 թուականին Հայաստանի իշխանութիւնները չեն ճանաչել ԼՂՀ-ն, ապա Հայաստանը ունի ԼՂՀ հանդէպ միայն մէկ իրաւունք. Դա 1994 թուականի Մայիսի 12-ին ստորագրուած եռակողմ զինադադարի մասին պայմանագիրն է, որը թոյլ է տալիս Հայաստանին մասնակցել Արցախում ցանկացած ռազմական գործընթացներում: Այսինքն, այսօր Հայաստանը իրաւական տեսանկիւնից չի խախտում ոչ մի միջազգային իրաւունք, եւ հանգիստ կատարում է իր՝ Արցախի Հանրապետութեան եւ նրա բնակչութեան անվտանգութեան երաշխաւորի դերը: Հենց դրա համար է, որ աշխարհը լռում է Արցախում հայկական զօրքերի ներկայութեան պահով:

Ի՞նչ տեղի կ՚ունենայ Հայաստանի կողմից Արցախի ճանաչման դէպքում: Հայաստանի եւ Արցախի միջեւ կը ստորագրուի փոխադարձ օգնութեան մասին Պայմանագիր, որից յետոյ էլ ոչ մի ուժ չի կարող ազդել Հայաստանի եւ ԼՂՀ յարաբերութիւնների վրայ, ինչը յուշում է, որ վերջ կը դրուեն միջազգային կառոյցների կողմից անընդհատ հնչող պահանջներին՝ դուրս բերել Հայաստանի ԶՈՒ Արցախի Սահմանադրութեամբ ամրագրուած տարածքներից:

Հակառակ դէպքում, աշխարհի այլ երկրներ կը ճանաչեն ԼՂՀ-ն որպէս միջազգային հանրութեան սուբիեկտ, այսինքն, կը տարանջատեն մեզ Հայաստանից, եւ մենք իրօք կ՚ունենանք առանձին ԼՂՀ կամ Արցախի Հանրապետութիւն, եւ առանձին Հայաստանի Հանրապետութիւն, այն, ինչ կայ Քորեայի դէպքում: Կորցնելով Արցախը՝ որպէս իր մի մասը, Հայաստանը, որպէս Ռուսաստանի կցորդ, կը կատարի միջազգային հանրութեան կողմից պարտադրուած բոլոր որոշումները, եւ կը գայ ժամանակ, երբ Հայաստանին կը ներքաշեն մի գործընթացի մէջ, որտեղ Ռուսաստանը նորից Հայաստանին կը ստիպի կռուել Թուրքիայի հետ, իր իսկ շահերից ելնելով, իսկ յետոյ միայնակ կը թողնի թուրքերի հետ դէմ առ դէմ: Իսկ Արցախը չի կարողանայ օգնել իր համերկրացիներին, քանի որ մեր ձեռքերը կապուած կը լինեն միջազգային պարտաւորութիւններով:

Այսօր Հայաստանը հնարաւորութիւն ունի չեղեալ համարել Ռուսաստանի հետ բոլոր նախկինում կնքուած համաձայնագրերը եւ Արցախի վերականգնուած սահմանով ճանաչումից յետոյ նոր պայմանագրեր կնքել Ռուսատանի հետ, որոնցով Ռուսաստանը կը պարտաւորուի օգնել իր ռազմավարական դաշնակցին, տրամադրելով նաեւ իր ռազմաբազան:

Աշխարհը եւ Արցախը դեռ սպասում է, որ հայ հասարակութիւնը դա կ՚ընկալի առանց նոր արեան, նոր կորուստների, որոնք աւելի մեծ ու ցաւալի կը լինեն: Իսկ եթէ ոչ, ապա հայ հասարակութիւնը կը ստանայ նոր պատմութեան դաս եւ կը յայտնուի պատմութեան լուսանցքում:

Մեր տղաները այդքանը հասկանում են, եւ չեն ների հայ հասարակութեանը նման պահուածքի համար:

«ԼՐԱԳԻՐ»

www.massisweekly.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## ՀԱԿ-ը Պատրաստ է Վերադառնալ ԸՕ Շուրջ Բանակցութիւնների Սեղանին

Հայ Ազգային Կոնգրէսը պատրաստ է վերադառնալ Ընտրական օրէնսգրքի շուրջ բանակցութիւնների սեղանին, եթէ իշխանութիւնները պատրաստակամութիւն յայտնեն լուծել ցուցակների մաքրման ու տեսախցիկների տեղադրման հարցը:

«Վրացական տարբերակով ցուցակները մաքրելը՝ այդտեղ համարեա համաձայնութեան եկել ենք: Ուղղակի իշխանութիւնը պէտք է դադարեցնի իր սաբոտաժը, իսկ դա սաբոտաժ է, երբ նա հրաժարւում է մասնակցել ցուցակների մաքրման գործին: Եւ եթէ նաեւ յայտարարի, որ պատրաստ է լուծել նաեւ տեսախցիկների տեղադրման խնդիրը, ուրեմն մենք կարող ենք վերսկսել 4+4+4 ֆորմատով բանակցութիւնները», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց ՀԱԿ խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը:

4+4+4 ձեւաչափով իշխանութիւնների հետ բանակցութիւնները բոյկոտած քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները եւս չեն բացառում բանակցութիւնների վերսկսելու հնարաւորութիւնը, եթէ նկատեն, որ իշխանութիւններն իսկապէս պատրաստ են փոխել տեսակէտները սկզբունքային հարցերի շուրջ:

«Եթէ վերանայուի իշխանութիւնների դիրքորոշումը առանձին հարցերի վերաբերեալ, եւ, մասնաւորապէս, ցուցակների հրապարակման վերաբերեալ, ապա մենք պատրաստ ենք վերադառնալ եւ շարունակել քննարկումը: Մեզ համար ցուցակների հրապարակումը առաջին կարեւոր կէտն է», - «Ազատութեան» հետ զրոյցում մանրամասնեց բանակցութիւններում քաղհասարակութեան ներկայացուցիչներից՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրէն Սոնա Այվազեանը:

Իշխանութեան ներկայացուցիչները քաղհասարակութեան ու ընդդիմադիրների 5 պահանջներին պատասխանում են հակընդդէմ առաջարկներով: 4+4+4 ձեւաչափով բանակցութիւններում իշխանութեան ներկայացուցիչներից՝ Կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեանն ասում է ցուցակների հրապարակման փոխարէն ասում են պատրաստ են դիմումի դէպքում տրամադրել կոնկրետ տեղամասի ցուցակից ընտրութեանը մասնակցած քաղաքացիների ընտրացուցակային համարները - «Հաշուի առնելով, որ բոլոր անձինք գրանցուելու են էլեկտրոնային սարքի միջոցով, դա նշանակում է՝ էլեկտրոնային սարքում առկայ է իւրաքանչիւր անձի վերաբերեալ գրառում, որ նա մասնակցել է ընտրութեան»:

Դիտորդական կազմակերպութիւնները, սակայն, պնդում են՝ խնդիրը այսպէս չի լուծուի:

«Եթէ չկայ ընդհանուր վստահութիւն էլեկտրոնային համակարգի նկատմամբ, ապա այդ էլեկտրոնային համակարգի կողմից գեներացուած այդ ցուցակի նկատմամբ», - նշում է Սոնա Այվազեանը:

## Ցանկանում ենք փակ ռեժիմով հարցեր ուղղել անձամբ վարչապետին, ԱԳՆ-ին ու ՊՆ-ին. Նաիրա Զոհրապեան

Պաշտպանութեան եւ արտաքին գործերի նախարարները պէտք է հանդիպեն Հայաստանի ԱԺ պատգամաւորների հետ: Այս մասին խորհրդարանում ապրիլի 25-ին յայտնել է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Նաիրա Զոհրապեանը՝ խօսելով Ղարաբաղում ապրիլեան իրադարձութիւնների մասին:

«Պաշտպանութեան նախարարի հետ տեղի ունեցած փակ հանդիպումից յետոյ էլի իրադարձութիւններ են եղել, եւ շատ հարցեր են առաջացել, որոնք չեն բաւարարուել, քանի որ խնդիրը շատ նուրբ է: Մենք ցանկանում ենք փակ ռեժիմով հարցեր ուղղել անձամբ վարչապետին, ԱԳՆ-ին ու ՊՆ-ին, կրկին անգամ հնարաւորինս սեղմ ժամկէտում նիստ հրաւիրենք, այլ ոչ թէ, ասենք, Հրանդ Բագրատեանի հետ ԱԺ փոխօսնակի աշխատասենեակում տետ ա տետ հանդիպում»,-ասել է Զոհրապեանն ու յաւելել. «Անհրաժեշտ է նոր փակ հանդիպում նախարարների, այլ ոչ թէ նրանց տեղակալների մակարդակով, որոնց մենք շատ յարգում ենք: Բայց օպիեկտիւ իրավիճակին վերաբերող հարցերին նախարարները պէտք է պատասխանեն»:



«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Նաիրա Զոհրապեան

## Լրագրողը Ներողութիւն է Պահանջում Ոստիկանապետից

Ազգային ժողովի փոխնախագահ, իշխող Հանրապետականի խօսնակ Էդուարդ Շարմազանովն այսօր իշխանութեան անունից ներողութիւն խնդրեց ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանի պահուածքի համար:

«Եթէ Սիրանոյշը վիրաւորուել է, ես, որպէս իշխանութիւն, Սիրանոյշից ներողութիւն եմ խնդրում», - ասաց Շարմազանովը:

Ապրիլի 24-ին, Ծիծեռնակաբերդում, հակադարձելով 1in.am-ի լրագրող Սիրանոյշ Պապեանի դիտարկմանը, թէ ոստիկանութիւնը պարբերաբար խօսում է բարեփոխումների մասին, սակայն հասարակութիւնը դրանք չի տեսնում, ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանն ասել էր, թէ լրագրողի մէջ «կին չի տեսնում»:

Անդրադառնալով ոստիկանապետի պահուածքին՝ Ազգային ժողովի փոխնախագահը ոչ միայն ներողութիւն խնդրեց իշխանութեան անունից, այլեւ ընդգծեց, թէ բոլորը պէտք է ձգտեն պահպանել կոռեկտութիւն:

«Իմ կարծիքով, անկախ կոնկրետ միջադէպից, բոլորս՝ եւ՛ լրագրողները, եւ՛ ոստիկանութիւնը, եւ՛ քաղաքական գործիչները, եւ՛ մեր քաղաքացիները պէտք է ձգտեն պահպանել կոռեկտութիւն», - ասաց Շարմազանովը:

ԲՀԿ խմբակցութեան ղեկավար Նաիրա Զոհրապեանը նոյնպէս ոստիկանապետի յայտարարութիւնը անընդունելի համարեց՝ ընդգծելով՝ «լրագրողը իր գործն է անում, անկախ նրանից՝ դա պաշտօնեային դուր է գալիս, թէ՝ ոչ:

Ոստիկանութիւնն պարզաբանում է ներկայացրել Վլադիմիր Գասպարեանի յայտարարութեան կապակցութեամբ՝ փորձելով բացատրել, թէ ինչ է ուզել ասել ոստիկանապետը, երբ յայտարարել է, թէ լրագրողի մէջ «կին չի տեսնում»:



Լրագրող Սիրանոյշ Պապեան

«Իրականում ոստիկանութեան պետը լրագրողին չի վիրաւորել, ընդամէնը, հակադարձելով նրա պնդմանը, թէ ոստիկանութեան փոփոխութիւնները չի տեսնում, որպէս ակնյայտը չտեսնելու օրինակ ասել է, թէ դա նոյնն է, որ իր առաջ կանգնած կնոջը չտեսնել որպէս կին», - ասուած է ոստիկանութեան հաղորդագրութիւնում:

Մինչդեռ 1in.am-ի լրագրող Սիրանոյշ Պապեանն «Ազատութեան» հետ զրոյցում նշեց՝ ոստիկանութեան արդարանալու այս փորձերն անիմաստ են, Վլադիմիր Գասպարեանն իրեն վիրաւորել է եւ պէտք է ներողութիւն խնդրի:

«Ոստիկանապետի պահուածքը ոչ ադեկվատ եմ դիտարկում, ոստիկանապետը վիրաւորել է իմ արժանապատուութիւնը: Երէկուանից մենք՝ թէ՛ իրաւաբանների, եւ թէ՛ իրաւապաշտպանների հետ քննարկում ենք մեր հետագայ քայլերը: Առաջիկայում մենք կը դիմենք Բարձրաստիճան պաշտօնեաների էթիկայի յանձնաժողով, ինչպէս նաեւ պատրաստւում ենք դիմել դատարան, որպէսզի ոստիկանապետը ներողութիւն խնդրի:

## Մամուլի Ազգային Ակումբը Կը Քննադատէ Իշխանութիւններու Պահուածքը

Ապրիլեան քառօրեայ պատերազմի ընթացքում հայաստանեան լրատուամիջոցները հանդէս բերեցին մասնագիտական գործունէութեան բարձր որակներ, մինչդեռ նոյն կերպ չդրսեւորուեցին իշխանութիւնները: Այս մասին յայտարարութիւն է տարածել Մամուլի ազգային ակումբը:

Յայտարարութիւնում մասնաւորապէս, ասւում է.

«Ապրիլեան քառօրեայ պատերազմի ընթացքում հայաստանեան լրատուամիջոցները հանդէս բերեցին մասնագիտական գործունէութեան բարձր որակներ՝ երկրի համար արտակարգ իրավիճակում լրագրողական բարդ եւ բացառիկ աշխատանք իրականացնելով: Մինչդեռ նոյն կերպ չդրսեւորուեցին իշխանութիւնները. տարբեր ոլորտների եւ տարբեր մակարդակի պետական պաշտօնեաները, հաւատարիմ մնալով լրագրողների նկատմամբ բռնութիւններ իրականացնելու եւ նրանց մասնագիտական գործունէութիւնը խոչընդոտելու մերժելի գործելակերպին, Հայաստանի համար բարդ եւ արտակարգ իրավիճակում շարունակեցին նոյն աւանդոյթներն ու բարքերը:

Ապրիլին 15-ին ՀԱՊԿ Ռազմական կոմիտէի 8-րդ նիստը լուսաբանող NEWS.am-ի թղթակցի ձեռքը վնասելով՝ ՀՀ ՊՆ երեք աշխատակիցներ խլել են նրա տեսախցիկը:

Ապրիլի 22-ին ոստիկանները դէպի Նախագահական նստավայր երթի ժամանակ, ցուցարարների սահմանադրական իրաւունքները կոպտօրէն ոտնահարելուն զուգահեռ, ծեծի եւ բռնի ուժով բերման են ենթարկել «Առաջին լրատուականի» օպերատորներ Նարեկ Բարսեղեանին եւ Սեւակ Սողոմոնեանին՝ խափանելով նրանց մասնագիտական գործունէութիւնը:

Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի յուշահամալիրում սգոյ երթի ժամանակ ՀՀ ոստիկանապետը վիրաւորական արտայայտութիւն է արել իրեն հարց ուղղող «Առաջին լրատուականի» լրագրող Սիրանոյշ Պապեանին:

Մամուլի ազգային ակումբը, արձանագրելով, որ

- լրագրողների նկատմամբ բռնութիւնները եւ նրանց հասցէին վիրաւորական արտայայտութիւնները կրում են շարունակական եւ անպատիժ բնոյթ,
- պատգամաւորները եւ բարձրաստիճան պաշտօնեաները լրագրողներին անուանարկերով ու վիրաւորելով՝ երկրում ստեղծում են անհանդուրժողականութեան մթնոլորտ:

Մամուլի ազգային ակումբը, խստօրէն դատապարտելով նման գործելակերպը,

- պահանջում է պատժել օրինազանցներին եւ կարգի հրաւիրել անուանարկողներին:

Մամուլի ազգային ակումբը կոչ է անում բարձրաստիճան պաշտօնեաներին չխոչընդոտել լրագրողների մասնագիտական գործունէութիւնը եւ օրինապահ ու բարեկիրթ լինել նրանց հետ յարաբերութիւններում:

# ԼՈՒՐԵՐ

## Հայաստանում ԱՄՆ Դեսպանատունը Պատասխանում է Ռուսական Թերթի Ամբաստանութիւններին

Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը յայտարարութիւն է տարածել՝ պատասխանելով ռուսաստանեան «Իզվեստիա» թերթին:

«Վերջերս իր թերթում լոյս տեսած մի յօդուածում «Իզվեստիա» պարբերականը յայտնում է, որ Երեւանում Ռուսաստանի դեսպանատան եւ Հայաստանի դիւանագիտական շրջանների ենթադրեալ աղբիւրների համաձայն՝ ԱՄՆ-ն ուղղակիօրէն ֆինանսաւորում է ընդդիմադիր կուսակցութիւններին Հայաստանում հակառուսական տրամադրութիւններ զարգացնելու համար: Միայն մէկ բան կարող ենք ասել այդ ամէնի կապակցութեամբ: Յօդուածում տեղ գտած սիւրրէալիսթական պնդումները աւելի անիրական չէին կարող լինել: Դեսպանատունը եւ ԱՄՆ ՄԶԳ-ն հպարտութեամբ եւ ամենայն թափանցիկութեամբ ֆինանսաւորում են քաղաքացիական հասարակութեան տարբեր կազմակերպութիւններին՝ նրանց հաղորդելով գործիքներ եւ միջոցներ ժողովրդավարական հաստատութիւնները հզօրացնելու եւ միջին հայի կեանքը բարելաւելու համար:

Մենք հպարտ ենք, որ Հայաստանի քաղաքացիական հասարակութիւնը մնում է ամենաուժեղ, ամենաազատ եւ ամենակենսունակ քաղաքացիական հասարակութիւններից մէկը տարածաշրջանում: Միգուցէ արժէ, որ «Իզվեստիա» պարբերականը հայեացք նետի Ռուսաստանի քաղաքացիական հասարակութեան դրութեան վրայ եւ համեմատի»,- ասւում է յայտարարութեան մէջ:

## «Իսրայէլը Պէտք է Ճանաչի Հայոց Ցեղասպանութիւնը». Գրում է «Հաարէցը»

Ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանութեան յիշատակի միջոցառումները հերթական անգամ կայացան առանց Իսրայէլի կողմից ցեղասպանութեան ճանաչման պաշտօնական յայտարարութեան: Որպէս պետութիւն, որը ժառանգել է Եւրոպայում հրեաների ցեղասպանութիւնը, Իսրայէլի համար Օսմանեան կայսրութիւնում հայերի կանոնաւոր ջարդերը ճանաչելը կարեւոր քայլ կը լինէր համեմատական ցեղասպանութիւնների ուսումնասիրմանը նպաստելու գործում՝ յատկապէս կարեւորելով «այլեւս երբեք» կարգախօսը: Բացի այդ, դա կարող է օգնել հասկանալ, որ Թուրքիայի ժխտողականութիւնը երկիրը հետ է պահում զարգացումից՝ Իսրայէլին ցոյց տալով սեփական անարդարութիւնները ժխտելուց հրաժարուելու անհրաժեշտութիւնը: Այս մասին «Հաարեց» իսրայէլական թերթում գրում է Լուիս Ֆիշմանը, հաղորդում է armradio.am-ը:

Այն, որ Իսրայէլը չի ուզում պաշտօնապէս ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը, պայմանաւորուած է Թուրքիայի հետ յարաբերութիւնները չփճացնելու փորձերով, նշում է հեղինակը: Թուրք-իսրայէլական յարաբերութիւնների ծաղկման շրջանում՝ 1990-ական թթ., Իսրայէլը պաշտպանում էր այդ քաղաքականութիւնը, չհաշուած գէնքի վաճառքը: Ամօթալի է, որ ԱՄՆ-ում հրէական լոբբինգը արգելափակել էր հայերի ողբերգութեան ճանաչումը որպէս այդպիսին:

Չնայած դրան, չճանաչման մասին ներքին քննարկումներ սկսուեցին 2000 թուականին, երբ կրթութեան նախարար Եոյսի Սարիդը Հայոց ցեղասպանութեան 85-ամեակի կապակցութեամբ Երուսաղէմում յայտարարեց, որ Հայոց յիշատակի օրը պէտք է բոլորի համար դառնայ մտորումների օր: Այդ օրը մենք՝ որպէս հրեաներ, Հոլոքոսթի զոհեր, պէտք է ուսումնասիրենք մեր վերաբերմունքը միւսների ցաւի հանդէպ: «Իր ելոյթում նա ցեղասպանութիւն բառն օգտագործել էր աւելի քան 10 անգամ»,- գրում է թերթը:

Չնայած 2010-ին թուրք-իսրայէլական յարաբերութիւնների վատթարացմանը՝ Իսրայէլը մինչեւ հիմա չի ճանաչել ցեղասպանութիւնը: Որքան էլ տարօրինակ է, նոր պատճառ է համարւում այն, որ Իսրայէլի քաղաքական գործիչները կարծում են, որ դա կարող է հանգեցնել յարաբերութիւնների ամբողջական սառեցման:

2014-ի ամրանը, երբ Իսրայէլի Նախագահ դարձաւ Հայոց ցեղասպանութեան ճանաչման կողմնակից Ռեուվէն Ռիվլինը, թւում էր, թէ վերջապէս եկել է դրա ճանաչման պահը: Սակայն դա նորից չեղաւ Իսրայէլի ԱԳՆ- ճնշման պատճառով:

Միգուցէ հիմա, երբ Իսրայէլն ու Թուրքիան բազմիցս յայտարարել են, որ մօտ են լիարժէք դիւանագիտական յարաբերութիւնները թարմացնելուն, Իսրայէլը պէտք է յստակ հասկացնել տայ, որ այդ յարաբերութիւնները չպէտք է գերի լինեն ցեղասպանութեան հարցում Թուրքիայի դիրքորոշմանը, եւ որ հայոց ցեղասպանութիւնը ճանաչելը Թուրքիայի բարեկամը կամ թշնամին լինելու հարցը չէ:

## Աշխատանքից Ազատուել Են Բանակի Բարձրաստիճան Պաշտօնեաներ

Նախագահ Սերժ Սարգսեանի հրամանագրերով՝ պաշտօններից ազատուել են Հայաստանի պաշտպանութեան նախարարի տեղակալնիւթատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ալիկ Միրզաբեկեանը, զինուած ուժերի գլխաւոր շտաբի հետախուզութեան վարչութեան պետ գեներալ-մայոր Արշակ Կարապետեանը, զինուած ուժերի կապի զօրքերի պետ-կապի եւ աւտոմատացուած կառավարման համակարգերի վարչութեան պետ գեներալ-մայոր Կոմիտաս Մուրադեանը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## Մարդատարի Պայթեցման Ահաբեկչութեան Վարկածը Ամբողջութեամբ Հերքուել է




Երեւանի մէջ պայթած մարդատարի մնացեալ խեղճերը

Ապրիլ 25-ի երեկոյեան Երեւանում որոտացած պայթիւնն ահաբեկչութիւն չէ, յայտարարում են իրաւապահները՝ միաժամանակ շեշտելով, որ վարկածների շրջանակը նեղանում է:

Հայաստանի քննչական կոմիտէն յայտնում է, որ դէպքի վայրում յայտնաբերուել է բջջային քարտ, որի բաժանորդը Հայաստանի քաղաքացի է, նախկինում երկու անգամ դատուած: Նրա տանը յայտնաբերուել է «Տրոտիլ» տեսակի պայթուցիկ նիւթ, պայթուցիչ սարքեր եւ տարբեր տեսակի էլեկտրասարքաւորումներ: «Տրոտիլ» տեսակի պայթուցիկ նիւթի տարրեր, հետքեր իրաւապահները յայտնաբերուել են նաեւ աւտոբուսի վրայ: Պարզուել է նաեւ, որ քարտի բաժանորդը կենցաղային հողի վրայ դժգոհութիւն է ունեցել ազգականներից եւ պատրաստուել է պայթուցիկն օգտագործել նրանց դէմ:

Առայժմ չի յստակեցւում՝ արդեօք նայ երկու զոհերից մէկն է: Այժմ միջոցներ են ձեռնարկւում հեռախօսային քարտի բաժանորդի եւ երկրորդ դիակի նոյնականացման ուղղութեամբ: Դիակն անճանաչելի է, նշանակուել է ԴՆԹ փորձաքննութիւն:

Պայթեցուած աւտոբուսում եղել է 10 մարդ՝ վարորդը եւ 9 ուղեւոր, որոնցից 2-ը տեղում մահացել են: Պարզուած է միայն մէկ զոհի ինքնութիւնը, նա եւ ութ վիրաւորները Հայաստանի քաղաքացիներ են:

Իրաւապահներն, ի դէպ, նրանց բոլորի բնակարաններում եւս խուզարկութիւններ են արել,

քէական գործի համար հետաքրքրութիւն ներկայացնող առարկաներ չեն յայտնաբերուել, նրանց հնարաւոր առնչութիւնը տեղի ունեցած պայթիւնի հետ հերքուել է:

Առաջին տեղեկութիւնները տեղում յայտնեց ոստիկանապետ Վլադիմիր Գասպարեանը, ով բացառեց գազի բալոնի պայթիւնի վարկածը, քանի որ «Bogdan» աւտոբուսն աշխատել է դիզելային վառելիքով: Պայթիւնը, ոստիկանապետի փոխանցմամբ, տեղի է ունեցել աւտոբուսի առաջնամասում՝ երկրորդ շարքում նստած տղամարդու մօտ:

«Այրում չի եղել, հետեւաբար պայթիւն է, որը կապուած չէ գազի եւ վառելանիւթի հետ: Այսպէս են ասում՝ ֆուգասային, այսինքն՝ ոչ բեկորային, ալիքաւոր», - նշեց Գասպարեանը:

## Վարդան Օսկանեան Հիմնեց «Համախմբում» Կուսակցութիւնը

«Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր, Հայաստանի նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանը, ով մէկ տարի առաջ դուրս էր եկել ԲՀԿ-ից եւ յայտարարել նոր կուսակցութիւն հիմնելու մտադրութեան մասին, Ապրիլ 27-ին լրագրողների հետ ճեպազրոյցում նշեց ստեղծուելիք «Համախմբում» կուսակցութիւնը խորհրդարանական ընտրութիւններին ընդառաջ, ներկայանալու է, որպես այլընտրանք՝ իշխող քաղաքական ուժին:

«Խորհրդարանական ընտրութիւններին ընդառաջ, մենք փորձելու ենք ներկայանալ, որպես առանցքային քաղաքական բեւեռ, ընտրութիւնների օրերին հանդիսանալու ենք ժողովրդի եւ մեր հասարակութեան համար իսկական այլընտրանք՝ իշխող քաղաքական ուժին: Եւ այս ճանապարհի վրայ մենք պատրաստ կը լինենք համագործակցելու ցանկացած քաղաքական ուժի հետ»,- ասաց Օսկանեանը:



Նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեան

«Համախմբում» կուսակցութեան նախաձեռնող խմբում 14 մարդ է ընդգրկուած, որոնցից 4-ը «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներ են:

Խմբի տարածած յայտարարութեան մէջ, մասնաւորապէս, նշուած է. «Այսօր, առաւել, քան երբեւէ, անհրաժեշտ է նոր՝ համախմբման պոտենցիալ ունեցող ուժ: Հասարակութիւնը վաղուց է հիասթափուել տարիների ընթացքում ձեւաւորուած քաղաքական կոնիւնկտուրայից, որի միջոցով հնարաւոր չի եղել Հայաստանում ձեւաւորել տնտեսական ու քաղաքական արդար յարաբերութիւններ»:

# ՄԱՐԿԸՐԻԹ ՊԱՐԱՆՔԻՑԷ՝ ՕՐՕՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐԸ



Ռուբէն Վարդանեան եւ Ճորճ Գլունի Օրօրա առաջին մրցանակը կը յանձնեն Մարկըրիթ Պարանքիցէին

Կազմակերպութեամբ 100 Lives նախաձեռնութեան, երէկ Երեւանի մէջ տեղի ունեցաւ Մարդկութեան Զարթօնքի Օրօրա մրցանակի առաջին հանդիսութիւնը, որուն ընթացքին յայտարարուեցաւ առաջին մրցանակակիրին անունը: Հանդիսութեան ներկայ գտնուեցան Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը, դերասան Ճորճ Գլունին, երգիչ Շարլ Ազնաւուրը, 100 Lives նախաձեռնութեան համահիմնադիրները, դիւանագէտներ եւ հիւրեր աշխարհի տարբեր շրջաններէն: Նշեալ մրցանակը կը միտի իւրաքանչիւր տարի շնորհակալութիւն յայտնեց մերօրեայ հերոսներուն, որոնք իրենց կեանքը կը վտանգեն ուրիշներուն օգնելու եւ անոնց կեանքը փրկելու համար:

Ընտրող յանձնաժողովին անունով, հանրածանօթ դերասան Ճորճ Գլունի յայտարարեց 2016-ի մրցանակակիրին անունը: Ան Մարկըրիթ Պարանքիցէն է, հիմնադիրը՝ Պուրունտիի Մէյսըն Շալոմ որբանոցին եւ REMA հիւանդանոցին, որոնք 1990-ականներէն ի վեր յատկացուած է ափրիկեան Պուրունտի, Ռուանտա եւ Դեմոկրատական Գոնկօ պետութիւններու երեխաներուն համար: Մրցանակը յանձնուեցաւ Հայոց ցեղասպանութենէն վերապրողներուն անունով:

Նշենք, որ հանդիսութեան ընթացքին ներկայացուեցան Արցախի սահմանային շփման գիծին վրայ տեղի ունեցած քառօրեայ պատերազմին զոհուած զինուորներուն լուսանկարները:

Օրօրայի զրոյցներ Օրօրա մրցանակաբաշխութեան նախաշեմին, Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանի սրահին մէջ տեղի ունեցան մասնագիտական զրոյցներ, մասնակցութեամբ այս առթիւ Երեւան ժամանած խումբ մը ակադեմականներու եւ ականաւոր գործիչներու: Քննարկումները եւ զրոյցները ընթացան »Միջազգային մարդասիրական ընկերութեան մէջ կանանց դերը«, »Լուսարձակները սեւեռել ճգնաժամին վրայ«, »Փրկել աշխարհի փախստականները՝ Սուրիա եւ այլուր«, »Մարդասի րական հարցերու միջազգային կարգավիճակը« խորագիրներուն տակ:

Մրցանակաբաշխութեան համահիմնադիր Ռուբէն Վարդանեան յայտարարեց, որ 100 Lives նախաձեռնութիւնը հարիւրամ եայ վադեմութեան իրադարձութիւն է, որ կարեւոր կը համարուի նաեւ ժամանակակից աշխարհին մէջ: Անոր խօսքով, տուեալ ձեռնարկին կազմակերպումը անիրատեսական կը թուէր, սակայն դարձած է իրողութիւն: »Միաժամանակ անհրաժեշտ է նաեւ կառուցել ապագան եւ խորհիլ անոր մասին: Յոյս ունինք, որ երկխօսութիւնը կը թոյլատրէ ուղիղեւ անկեղծ խօսիլ այն մասին, ինչ որ արդէն կը կատարուի«, ըսաւ Վարդանեան:

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի իրաւապաշտպաններու հարցերով օգնական Հինա Ճիլանի յայտարարեց, որ մարդու իրաւունքներու ոտնահարումները քանի մը գործօններու հետեւանք են: Անոր խօսքով, պետութիւնը յաճախ կը վատթարացնէ հակամարտութիւնները: ՄԱԿ-ի մօտ Միացեալ Նահանգներու նախկին դեսպան, ազգային անվտանգութեան խորհուրդի ղեկավարի նախկին տեղակալ Նէնսի Սոդըրպըրկ յայտարարեց, որ հակամարտութիւններու կարգաւորման մէջ կանանց մասնակցութիւնը անհրաժեշտ է: Միջազգային ճգնաժամային խումբի պատուաւոր անդամ Հարէթ Իւանզ յայտարարեց, որ մեծ հակամարտութիւնները հազուադէպ կը հանգուցալուծուին ռազմական միջոցներով: Իսկ Հայաստանի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգսեան նշեց, որ Ցեղասպանութիւն վերապրածները չունին միջազգային պաշտպանութիւն: Հոլոքոսթի ուսումնասիրութեան Լեւինի անուան հիմնարկի ներկայացուցիչ Սթիւըն Լաքերթ յայտարարեց, որ Իրաքի մէջ Իսլամական Պետութիւն կազմակերպութիւնը կը գործածէ այն նոյն մեթոտները, որոնք գործածուած էին Օսմանեան Թուրքիոյ մէջ՝ հայերուն դէմ: Protection International կազմակերպութեան նախագահ Էնրիքէ Էկուրէն յայտարարեց, որ Հայոց ցեղասպանութիւնը չճանչնալու պատճառ ներէն մէկը՝ ոչ բաւարար տեղեկացուածութիւնն է:

## Ամերիկայի Դեսպանի Կարծիքով Նախագահ Օպամայի Յայտարարութիւնը Շատ Ուժեղ Էր

ԱՄՆ նախագահը շատ հզօր, ուժեղ յայտարարութիւն է արել: Այս մասին, Ապրիլի 24-ին, Ծիծեռնակաբերդի յուշահամալիրում լրագրողների հետ զրոյցում նշել է Հայաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազօր դեսպան Ռիչըրտ Միլսը:



ԱՄՆ դեսպան Ռիչըրտ Միլս

Հարցին, թէ ինչպէս է վերաբերում փաստին, որ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման իր խոստումը չկատարեց եւ դարձեալ «ցեղասպանութիւն» բառը չօգտագործեց, դեսպանը պատասխանել է. «Կարծում եմ՝ երէկ նախագահը շատ հզօր, ուժեղ յայտարարութիւն է արել: Նա դէպքերը որակեց որպէս 20-րդ դարի վատթարագոյն վայրագութիւններից մէկը: ԱՄՆ նախագահը հաւատարիմ է մնում այն յանձնառութեանը, ինչին ձգտում ենք մենք բոլորս՝ դէպքերի լիարժէք, ամբողջական եւ արդարացի ճանաչմանը: ԱՄՆ նախագահը շարունակում է հաւատարիմ մնալ աշխատելու այն ուղղութեամբ, որպէսզի լիարժէք եւ ամբողջական կերպով ճանաչուեն դէպքերը»:

Դիտարկմանը, թէ գուցէ ԱՄՆ նախագահը չի ցանկանում Թուրքիայի հետ յարաբերութիւնները վատթարացնել, դեսպանն արձագանգել է, որ ԱՄՆ նախագահը նշել է, որ իր նպատակը ճշմարտութիւնն է եւ երկու հասարակութիւնների միջեւ հաշտեցումը, նա շարունակում է հաւատարիմ մնալ այդ յանձնառութեանը:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ԱՒԵԼԻ ՔԱՆ 60 ՀԱԶԱՐ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ



Շարունակուած էջ 1-էն

պէս նաեւ Լոս Անճելոսի քաղաքապետական խորհուրդի անդամներ Փոլ Գրիգորեանն եւ ուրիշներ:

Հայ ժողովրդի անժամանցելի արդար դատին եւ ցեղասպանութեան դատապարտման ու հատուցման պահանջատիրական ելոյթներ ունեցան գաղութի ներկայացուցիչներ՝ Թամար Փոլատեան, Գրիգոր Մոլոյեան, Տարօն Տէր Խաչատուրեան, իսկ երիտասարդութեան անունով Ժոզեֆ Գասգանեան:

Բոլոր ելոյթներու ընթացքին բազմահազար ամբոխը հայրենասիրական լոզունգներով ու վանկարկումներով իր արդար զայրոյթն ու պահանջները կը ներկայացնէր, միաժամանակ դատապարտելով Արցախի ազատատենչ ժողովուրդին վրայ կատարուած ազերիներու բարբարոսական արարքները:

Այս առթիւ օրուան պատշաճ գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Դրօ Գրիգորեան, Արա Տապանճեան, Արապօ եւ Ներսիկ Իսպիրեան, Արմէնճիք եւ Յարութ Բամպուքճեան:

Արդարեւ անցեալ տարուան Եղեռնի 100 ամեակի Լոս Անճելոս քաղաքի պատմական մեծագոյն քայլարշաւին իրենց մասնակցութիւնը բերին շուրջ 160 հազար հայորդիներ: Իսկ այս տարուանը եւս կը նկատուի պատմականօրէն քաղաքական ամենամեծ հանրահաւաքը, որ Լոս Անճելոսի ոստիկանութեան տեղեկագրի համաձայն կը գնահատուի 60 հազար:

100 ամեակէն ետք հայութիւնն այժմ թեւակոխած է նոր հանգրուան մը, ուր շեշտը պիտի դրուի հատուցման պահանջներուն վրայ՝ Թրքական եւ միջազգային ատեաններու միջոցով:

# Ցեղասպանութեան 101-Ամեակի Նշումը Թուրքիոյ Մէջ

\Ցեղասպանութեան 101-րդ ամեակը նշուեցաւ նաեւ Թուրքիոյ մէջ:

Ամէնէն զգայացունց երեւոյթը պարզուեցաւ Ապրիլ 23-ին, Թուրքիոյ խորհրդարանէն ներս, ուր հայազգի երեսփոխան Կարօ Փայլան խորհրդարան ներկայացաւ 1915 թուականին նահատակուած հայ մտաւորական-պատգամաւորներու՝ Գրիգոր Զոհրապի, Նազարէթ Տաղաւարեանի, Համբարձում Պոյաճեանի, Կարապետ Փաշայեանի եւ այլ մտաւորականներու լուսանկարներով: Ելոյթ ունենալով Կարօ Փայլան յայտարարեց, որ Օսմանեան Խորհրդարանի անդամ եղած եօթ հայ պատգամաւորներ սպաննուած են Ցեղասպանութեան ժամանակ եւ պահանջեց Թրքական խորհրդարանէն՝ հետաքննութիւն սկսիլ անոնց սպանութեան հարցով, պարզելու համար անոնց ենթարկուած ճակատագրի մանրամասնութիւնները, գտնելու աճիւնները եւ արժանի ձեւով զանոնք յանձնելու հողին :

Հայ պատգամաւորի ելոյթի ընթացքին Խորհրդարանի նստարաններուն վրայ զետեղուած էին նահատակ երեսփոխաններու նկարները:

Իր ելոյթի աւարտին Կարօ Փայլանը հայերէնով ըսաւ. «Աստուած անոնց հոգին լուսաւորէ»:

## Միջոցառում Պոլսոյ Մէջ

Ապրիլ 24-ին, «Ցեղապաշտութեան եւ ազգայնամոլութեան դէմ պայքարի» խմբակը, «Ցեղապաշտութեան դէմ պայքարի եւրոպական շարժումը», Թուրքիոյ «մարդու իրաւունքներու պաշտպանութեան միութիւնը» եւ «Նոր Զարթօնք» հայկական կազմակերպութիւնը հաւաքուեցան Պոլսոյ Կապաթաշի կայարանին մէջ, բարձրացնելով Ցեղասպանութիւնը ճանչնալու կոչ ուղղող պաստառներ, 1915-ին ձերբակալուած ու մահուան ուղարկուած հայ մտաւորականներու նկարները:

Մասնակիցները ապա երթով ուղղուեցան Հայտարփաշայի կայարան, ուրկէ 1915-ին իրենց մահուան ուղարկուած էին հայ մտաւորականները: Արտասանուեցան հայերէն, թրքերէն եւ անգլերէն լեզուներով յայտարարութիւններ:

Պոլսոյ Կալաթասարայի հրապարակին վրայ տեղի ունեցաւ սգոյ ձեռնարկ, կազմակերպուած «Շաբաթ օրուայ մայրեր» նախաձեռնութեան կողմէ, որ կը ներկայացնէ Թուրքիոյ բանտերուն մէջ սպաննուածներու մայրերը: Հաւաքի մասնակիցները բարձրացուցին 1915-ի Ապրիլ 24-ին զոհուած հայերու լուսանկարներ: Ձեռնարկին ընթացքին նաեւ ելոյթ ունեցաւ ընդդիմադիր Ժողովրդահանրապետական Կուսակցութեան փոխ նախագահը:

## Հայերէն խորագիր Քրտական Թերթի Էջերուն

«Ozgur Gundem» պարբերականը հրապարակուեցաւ հայերէն գլխաւոր խորագրով՝ «Ցեղասպանութիւնը կը շարունակուի»: Թերթին մէջ նշուած էր, որ երիտթուրքերու իրականացուցած Հայոց ցեղասպանութիւնը ներշնչեց Հիթլերին՝ իրականացնելու հրէաներու ցեղասպանութիւնը:

«Թուրքիոյ մէջ իշխող Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութիւնն ալ կը հետեւի երիտթուրքերու օրինակին՝ քիւրտ ժողովուրդին դէմ նոյն ցեղասպանութեան հայեցակարգը գործածելով», նշուած է հրապարակումին մէջ:

Քրտական «Դեմոկրատական Հասարակութեան Գոնկրէս» կուսակցութիւնը Հայոց ցեղասպանութեան տարելիցին կապակցութեամբ հրապարակեց յայտարարութիւն մը որուն մէջ նշուած էր, որ Իթթիհատականները իրականացուցած էին «մէկ երկիր, մէկ ազգ, մէկ լեզու» քաղաքականութիւն, որուն հետեւանքով Անաթոլիոյ եւ Միջագետքի ժողովուրդներուն հանդէպ մեծ ցեղասպանութիւն կատարուած էր: «Տեղի ունեցածին մէջ ամենէն սարսափելին 1915-ի Հայոց ցեղասպանութիւնն էր: Մէկ ու կէս միլիոն հայ կոտորուեցաւ ու այդքան հայ արտաքսուեցաւ Ցեղասպանութեան ժամանակ», նշուած է յայտարարութեան մէջ: Կուսակցութիւնը դատապարտեց ժխտողականութիւնը եւ Թուրքիոյ իշխանութիւններուն կոչ ուղղեց առերեսուելու պատմութեան հետ եւ հրաժարելու ցեղասպան մտածելակերպէն:



Պոլսոյ մէջ կը նշուի հայ նահատակներու տարելիցը



Հնչակեան մեծանուն գործիչ Համբարձում Պոյաճեանի նկարը պարզած, Կարօ Փայլան ելոյթ կ՚ունենայ Թրքական Խորհրդարանի ամպիոնէն



Հայ նահատակ պատգամաւորներու լուսանկարները՝ զետեղուած Խորհրդարանի նստարաններուն վրայ

## Էրտողանի Յայտարարութիւնը

Շարունակելով ժխտողական քաղաքականութիւնը, Թուրքիոյ նախագահ Ռեճէփ Թայիփ Էրտողան հրապարակեց յայտարարութիւն մը, որուն մէջ դարձեալ ցաւակցութիւն յայտնեց 1915-ին սպաննուած հայերուն եւ ողջունեց անոնց ժառանգորդները: «Կ՚ողջունեմ ոգեկոչման հանդիսութիւնը, որ դարձեալ տեղի կ՛ունենայ Թուրքիոյ մէջ, որ կը համարուի Օսմանեան հայերու ցաւը վերապրելու եւ զանոնք յիշելու լաւագոյն վայրը», ըսուած է Էրտողանի նամակին մէջ, որ ուղղուեցաւ Պոլսոյ հայոց պատրիարքութեան եւ ընթերցուեցաւ պատարագին ընթացքին: «Մենք պիտի շարունակենք խաղաղութեան ջանքերը ընդդէմ անոնց, որոնք կը փորձեն պատմութիւնը քաղաքականացնել, ատելութիւն եւ թշնամութիւն սերմանել երկու հարեւան ժողովուրդներուն միջեւ, որոնք կապուած են պատմութեամբ եւ սովորութիւններով«, ըսաւ Էրտողան: Ան ողջունեց «հայերու եւ թուրքերու միջեւ մօտ հազար տարուայ համագոյակցութեան մշակոյթը«, խօսելով միացեալ ցաւի մասին:

«Անաթոլիոյ մէջ, ուր մարդասիրական պարտականութիւնները երբեք չեն ժխտուած, ուր ուրախութիւնն ու տխրութիւնը համատեղ զգացած են բոլորը, արդարութիւնը պիտի յաղթէ», հաստատեց Թուրքիոյ նախագահը:

Պատարագին ներկայ գտնուեցաւ նաեւ Ժողովուրդներու Դեմոկրատական Կուսակցութեան երեսփոխան Կարօ Փայլանը: Անապա այցելեց Թուրքիոյ բանակին մէջ ծառայութեան ընթացքին սպաննուած Սեւակ Պալըքճիի գերեզման:

Հայաստանի արտաքին գործոց նախարարի տեղակալ Շաւարշ Քոչարեան մեկնաբանեց Թուրքիոյ նախագահին ուղերձը եւ նշեց, որ յայտարարութիւնը Էրտողանի ժխտողականութեան հերթական անյաջող դրսեւորումն էր: «Թուրքիա կը շարունակէ ջանքեր գործադրել հաւասար հարթութեան վրայ դնելու պատերազմական զոհերուն եւ անոնց, որոնք զոհ դարձան պետական մակարդակով ծրագրուած եւ իրականացուած Ցեղասպանութեան: Թուրքիոյ ժխտողական կեցուածքը աւելի կը խորացնէ հայ եւ թուրք ժողովուրդներու միջեւ առկայ անջրպետը, որուն վերացումը լաւագոյն միջոցն է պատմութեան հետ առերեսուելու եւ ապաշխարհանքի», ըսաւ Քոչարեան:



## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀՍԿՈՒՄ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ



Նախորդ տարիներու նման այս տարի եւս ցեղասպանութեան 101-րդ տարեդարձը նշուեցաւ շրջանային տարբեր միջոցառումներով, հանդիսութիւններով, քայլարշաւով, մամուլի ու հեռատեսիլի հաղորդումներով, ինչպէս նաեւ ցուցահանդէսներով ու հսկում մոմավառութիւններով:

Ապրիլ 23-ի երեկոյեան, Փասատինայի «Memorial Park»-էն ներս տեղի ունեցաւ երիտասարդական հսկում, կազմակերպութեամբ «Կայծ» երիտասարդական միութեան, Հ.Մ.Մ.ի եւ Հայ Ամերիկեան Խորհուրդի, որուն ներկայ եղան հարիւրաւոր հայեր:

Երեկոն սկսաւ Ամերիկայի եւ մասնակցութիւնը բերին Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբը, երիտասարդ ասմունքողներ՝ Անի Եւ Աննա Ափեան, իսկ ազգային հայրենասիրական երգերով ելոյթ ունեցան Վաքօ Զոլաքեան եւ Աւնօ Մկրտչեան:

Երեկոյի աւարտին ներկաները ուղղուեցան դէպի մօտակայ Հայոց Եղեռնի նորակառոյց յուշարձանը, ու իւրաքանչիւրը զետեղեց իր ծաղիկը նահատակաց յուշարձանին առջեւ:

### Գաղութային Այլ Միջոցառումներ

Նոյն օրը երեկոյեան, Կլէնտէլի քաղաքապետարանի շրջափակին մէջ, կազմակերպութեամբ Մի-



Հայաստանի քայլերգներով, որմէ ետք «Կայծ» Երիտասարդական Միութեան անունով բացման խօսք կատարեցին օրուայ երկու հանդիսավարներ՝ Ալիսոն Ղաֆարի (Անգլերէն) եւ Անի Ափեան (Հայերէն):

Հայ Ամերիկեան Խորհուրդի անունով ելոյթ ունեցաւ Քորթնի Թոսունեան, որ իր խօսքի աւարտին հրաւիրեց Լոս Անճելոս գաւառի վերակացու Մայք Անթոնովիչը:

Բոլոր ելոյթ ունեցողները անդրադարձան հայ ժողովուրդի ենթարկուած ճակատագրին, վերապրելու կամքին, ցեղասպանութեան ճանաչումին, հատուցման եւ պահանջատիրութեան, ինչպէս նաեւ անդրադրձան Ատրպէյճանի կողմէ Արցախի խաղաղ բնակչութեան դէմ կատարուող յարձակումներուն:

Երեկոյի ընթացքին, մէջ ընդ մէջ գործադրուեցաւ օրուայ խորհուրդը փոխանցող գեղարուեստական յայտագիր մը, որուն իրենց ացեալ Հայ Երիտասարդներու միութեան տեղի ունեցաւ հսկում եւ մոմավառութիւն, որուն ներկայ էին հազարաւոր ժողովուրդ:

Ապրիլի 24-ին առաւօտեան ժամը 10:00ին, Հոլիվուտի «Փոքրիկ Հայաստան» շրջանին մէջ տեղի ունեցաւ Միացեալ Հայ Երիտասարդներու տարեկան ցոյցը, մասնակցութեամբ տասնեակ հազարաւոր պահանջատէր հայորդիներու: Այս առթիւ տեղի ունեցաւ նաեւ քաղաքական միթինկ՝ հայ ժողովուրդի ու Արցախի արդար դատին ի նպաստ:

Տեղի ունեցան նաեւ զոյգ ցուցահանդէսներ՝ մեծ Եղեռնի 101-րդ տարեդարձին նուիրուած: Առաջինը պատմավաւերագրական էր, Կլէնտէլի «Պրանտ» գրադարանին մէջ: Իսկ երկրորդը հայ տաղանդաւոր գեղանկարիչներու տասնեակ մը իւղանկարներու գործերը՝ Կլէնտէլի Հայաստանի աւագ հիւպատոսարանի սրահներուն մէջ:

## ՍԱՐԳՍԵԱՆ. «ՀԱՅԵՐՈՒ ՆՈՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՉԱՐՏՕՆԵՆՔ»

*Շարունակուածէջ 1-էն*

աւելին գիտէ՝ քան ինչ գիտէր երէկ: Սարգսեան նաեւ նշեց, թէ այս օրերուն տակաւին չեն հանդարտած ապրումները, քննարկումներն ու վերլուծութիւնները՝ կապուած Ապրիլ 2-էն 5 տեղի ունեցած պատերազմական գործողութիւններուն հետ, երբ Ատրպէյճանը կրկին պատերազմ սկսաւ Արցախի դէմ: «Ատրպէյճանի իրական նպատակը կամ աւելի ճիշդ՝ երազանքը Արցախի գրաւումն ու հայաթափումն է, որուն իբրեւ արդիւնք՝ Արցախի բնակչութիւնը մասամբ պէտք է բնաջնջուի, մասամբ բռնագաղթէ», ըսաւ Սարգսեան եւ հաւաստեց, որ ամբողջ աշխարհին լուր կու տայ, թէ Արցախի մէջ հայերու բնաջնջում կամ բռնագաղթ տեղի պիտի չունենայ: «Հայերու նոր ցեղասպանութիւն մենք պիտի չարտօնենք« ընդգծեց Հայաստանի նախագահը, շեշտելով, որ «մեր ժողովուրդի բացառիկ միասնականութեամբ ու կամքով պիտի կառուցենք ազատ, խաղաղ ու ժամանակակից երկիր, համայն հայութեան հզօր հայրենիք, ուր կը վերադառնան Հայոց ցեղասպանութեան զոհերու եւ հրաշքով փրկուածներու սերունդները»:

Երեւանի մէջ տեղի ունեցաւ նաեւ «Ընդդէմ Ցեղասպանութեան Յանցագործութեան» միջազգային երկրորդ համագումարը, որուն ներկայ գտնուեցան քաղաքական, պաշտօնական, դիւանագիտական, լրատուական, մարդասիրական, ընկերային, տնտեսական, իրաւական եւ այլ ոլորտներու մէջ ծառայող բազմաթիւ թեան ճանաչումը հիմնական միջոցն է հասնելու արդարութեան: Անոր խօսքով, Ցեղասպանութեան դէմ ոչինչ կատարելը ինքնին կը համարուի ոճիր: Մարդաբանութեան եւ միջազգային հարցերու մասնագէտ փրոֆէսոր Ալէքս Հինթըն յայտարարեց, որ ցեղասպանութիւնները կը վերադառնան տարբեր եւ նոր ձեւերով: Թուրք իրաւապաշտպան եւ գիտնական Սայիտ Չէթինօղլու յայտարարեց, որ Հայոց ցեղասպանութիւնը Թուրքերուն ամօթն է: Ան Թուրքերուն կոչ ուղղեց ազատելու ամօթի զգացումէն եւ ներողութիւն խնդրելու Հայոց ցեղասպանութեան համար:

Ամերիկեան Տէլաուէր նահանգի համալսարանի դասախօս Արոն Ֆիխթէլպըրկ համոզում յայտնեց, որ Ցեղասպանութիւնը ծրագրած եւ գործադրած օսման առաջնորդներու ոչնչացումը՝ հայ մարտիկներու ձեռամբ, որոշ իմաստով արդարացուած է: Դասախօսը նաեւ նշեց, որ ցեղասպանութիւնները պիտի չդադրին, որովհետեւ ոմանք չեն ուզեր գործնական պայքար մղել անոնց դէմ:

Միջազգային իրաւունքի եւ ցեղասպանութեան իրաւունքի մասնագէտ Ուիլիամ Շապաս իր կարգին յայտարարեց, թէ որոշ երկիրներ կը մերժեն ճանչնալ Հայոց ցեղասպանութեան փաստը, որովհետեւ մտահոգուած են Թուրքիոյ հետ իրենց յարաբերութիւններով:

Համագումարի ամփոփիչ յայտարարութեան մէջ մասնակիցները ողջունեցին ՄԱԿի կողմէ Դեկտեմբեր 9-ն Ցեղասպանութեան յանցագործութեան զոհե-




անձնաւորութիւններ եւ ակադեմականներ:

Համագումարին ընթացքին խօսքեր արտասանեցին բազմաթիւ ակադեմականներ, մարդկային իրաւունքներու գործիչներ եւ քաղաքական անձնաւորութիւններ:

Դերասան Ճորճ Գլունի յայտարարեց, որ Հայոց ցեղասպանութիւնը ոչ միայն Հայաստանի, այլեւ աշխարհի պատմութեան մէկ մասն է: Ան գոհունակութիւն յայտնեց այս օրերուն Երեւան գտնուելուն համար եւ զարմանալի նկատեց, որ Թուրքիա տակաւին կը մերժէ Հայոց ցեղասպանութեան փաստը:

Ցեղասպանութեան հետազօտողներու միջազգային հիմնարկի նախագահ Էնտրիւ Ուոլֆորտ յայտարարեց, որ Ցեղասպանութեան րու յիշատակի եւ արժանապատուութեան եւ այդ յանցագործութեան կանխարգիլումի միջազգային օր հռչակելու որոշումը, յարգանքի տուրք մատուցեցին եւ երախտագիտութիւն յայտնեցին Ցեղասպանութեան օրերուն մարդասիրական գործունէութիւն տարած անձերուն եւ կողմերուն, մտահոգութիւն յայտնեցին Միջին Արեւելեան վտանգաւոր զարգացումներով, բոլոր պետութիւններէն պահանջեցին ճանչնալու Ցեղասպանութեան փաստը եւ կանխարգիլելու անոր կրկնութիւնը, նաեւ առաջարկեցին կեդրոնացումը դնել կրթութեան դերակատարութեան վրայ: Որոշուեցաւ յաջորդ համագումարը կայացնել Երեւանի մէջ՝ 2018 թուականին:

www.massispost.com
daily news updates

# ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ԴԱՏԻ ՈՒ ԱՐՑԱԽԻ ՊԱՀԱՊԱՆ



Լիբանանահայութիւնը վերահաստատեց իր ուխտը՝ նահատակներուն, Հայրենիք Հայաստանի, Արցախի, հայկական իրաւունքներու եւ սրբութիւններու հանդէպ: Լիբանանահայութիւնը վերստին ապացուցեց, որ կը մնայ Սփիւռքի սիրտը, Սփիւռքի մարմինը ղեկավարողը, միաժամանակ պատրաստ է անհրաժեշտութեան պարագային նեցուկ կանգնելու Հայաստանին ու Արցախին:

Կազմակերպութեամբ հայ քաղաքական երեք կուսակցութիւններուն, Կեդրոնական Պէյրութի Նահատակաց հրապարակին վրայ երէկ երեկոյեան տեղի ունեցաւ ժողովրդային բազմամարդ հանրահաւաք մը, ոգեկոչելու համար Հայոց ցեղասպանութեան 101-րդ ամեակի եւ մէկ ու կէս միլիոն նահատակներուն յիշատակը:

Լիբանանահայութիւնը կեդրոնական Պէյրութ հասած էր իր բոլոր շերտերով, գլխաւորութեամբ պետական գործող եւ նախկին նախարարներու ու երեսփոխաններու, Պէյրութի մօտ Հայաստանի դեսպանին, երեք յարանուանութիւններու հոգեւոր առաջնորդներու, հայ քաղաքական կուսակցութիւններու ղեկավարութեանց, հայկական միութիւններու ներկայացուցիչներուն, կրօնական, դիւանագիտական, զինուորական անձնաւորութիւններու:



Հանդիսութեան ընթացքին նախ արաբերէնով ընթերցուեցաւ հայ քաղաքական երեք կուսակցութիւններու միացեալ յայտարարութիւնը, ապա արտասանուեցան երեք խօսքեր: Ռ.Ա.Կ.-ի անունով Սեւակ Յակոբեան յայտարարեց, որ տակաւին Ցեղասպանութեան եղելութիւնը, նկարները եւ ցաւը կանգուն կը մնան Հայ ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ, միշտ կենդանի տրոփումով ու այն հաստատ համոզումով, որ Հայ Դատը արդար է ու անգիջանելի՝ որքան ալ տարիները անցնին, որովհետեւ իրաւունքը չի մահանար:

Հ.Յ.Դ.-ի անունով խօսք առաւ Յակոբ Հաւաթեան: Ան խօսեցաւ ժամանակակից համազգային անվտանգութեան համակարգ մը ստեղծելու անհրաժեշտութեան մասին, որովհետեւ նոր պատերազմի հանգրուան սկսած է եւ երկար պիտի տեւէ:

Հաւաթեանի համաձայն, պէտք է աշխատիլ նշեալ համակարգի 5 գործօններու վրայ, որոնք կ'երաշխաւորեն անվտանգութիւնը՝ զանազան ոլորտներու մէջ, քաղաքական, զինուորական, ակադեմական, մշակութային: Ան նշեց, որ հայթրքական արձանագրութիւններէն Հայաստանի ստորագրութիւնը յետս կոչելու պահը արդէն հասած էր որոշ ժամանակ առաջ:

Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ ընկ. Կիրակոս Թիւթիւնճեան արտասանելով Կուսակցութեան խօսքը յատկապէս ըսաւ.- Տարի մը առաջ էր, երբ Հայաստանով, Արցախով ու Սփիւռքով՝ միասնաբար նշեցինք Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը, մեր վճռակամ կեցուածքով աշխարհին ըսինք, որ մենք պահանջատէր ենք, որ մենք պիտի շարունակենք մեր երթը, որ մենք պիտի պայքարինք յանուն հայ ժողովուրդի գերագոյն շահերուն:

«Այսօր եւս այստեղ, սփիւռքահայութեան սիրտը համարուող Պէյրութի Նահատակաց հրապարակէն, նոյն վճռականութեամբ է որ կը դիմենք ամբողջ աշխարհին: Հայ ժողովուրդը որպէս ցեղասպանուած ժողովուրդ պիտի շարունակէ մնալ պահանջատէր, պիտի շարունակենք մնալ մեր նահատակներէն մեզի կտակուած պատգամներուն հետեւորդները: Այդ մասին կը վկայեն Սփիւռքի տարբեր գաղութներուն մէջ հայկական օճախներ հիմնադրած, հայ եկեղեցիներ բարձրացուցած եւ հայ ակումբներ կերտած հայութեան վերջերս հանդէս բերած կուռ, միասնական եւ վճռական շարքերը:

«Սիրելի պահանջատէր երիտասարդութիւն, այսօր կը դիմեմ ձեզի, որպէս Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչ, հաստատակամ մնալու ձեր ըմբռնումներուն մէջ: Դուք վաղուայ այն բազուկներն էք, որոնք պիտի բարձր պահեն հայ ժողովուրդի պահանջատիրութեան բարձրագոյն ջահերը», յայտարարեց Ընկ. Թիւթիւնճեան:

Ընկ.հի Անի Ղարիպեանի հանդիսավարութեամբ տեղի ունեցած հանդիսութեան ընթացքին նաեւ ներկայացուեցաւ գեղարուեստական յայտագիր: Մայեսթրօ Պարգեւ Թասլաքեանի ղեկավարած Ֆայհա երգչախումբը ներկայացուց շարք մը երգեր, «Արարատ» օրաթերթի տնօրէնուհի ընկ.հի Անի Եփրեմեան հանդէս եկաւ ասմունքով, իսկ հայրենասիրական երգերու փունջ մը ներկայացուցին Կարօ Քէլէքեանը եւ Աւօ Ագրապեանը, ընկերակցութեամբ Պօղօս Քէլէշեանի:

Հայ քաղաքական կուսակցութիւններու կազմակերպած 101 ամեակի ոգեկոչման կեդրոնական

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԾՈՎ ՉԷ՝ ՈՎԿԻԱՆՈՍ Է

**ԺՈՐԺ ՅԱԿՈԲԵԱՆ**

Եթէ այդպէս չլինէր դարեր շարունակ չէինք համբերի եւ հանդուրժի, այլ կ'ըմբոստանայինք թէ ներքին եւ թէ արտաքին թշնամիների դէմ, որոնց շնորհիւ 300,000 քառ. քմ. տարածքից մնաց շուրջ 30,000ը: Ով է մեղաւոր: Վերլուծել է պէտք եւ հասկանալ թէ ինչո՞ւ համաշխարհային քաղաքակրթութիւնը իր աւանդը ներդրած հայ ազգը միշտ արժանանում է նման ճակատագրի: Գուցէ նրանից է որ առաջինն էինք, որ ընդունեցինք քրիստոնէութիւնը, որպէս պետական կրօն, որը մեզ յորդորում է լինել համբերատար, պարկեշտ, օրինապահ, քաղաքակիրթ: Եթէ այդ բոլորի գինը պետականութիւն կորցնել է (մօտ 700 տարի), անընդհատ տարածքներ կորցնելը, եղեռնի ենթարկուելը, ռուսների ենթակայ լինելն է, ինքնուրոյն գործելու եւ որոշումներ կայացնելու անկարողականութիւնն է քառօրեայ պատերազմում մատաղ սերնդի զոհաբերութիւնն է, շարունակական արտագաղթի, սոցիալական վիճակի վատթարացումն է, ժողովրդի քուէն կեղծած, գողացած, կոռումպացուած իշխանութիւն ունենալն է, ապա այդ դէպքում ես անձամբ եւ ինձ նման շատ-շատերը պատրաստ չենք համբերելու, հանդուրժելու այս վիճակը, որտեղ անապահով ընտանիքների 18-20 տարեկան մատղաշ զինուորները իրենց կեանքով վճարէ այդ գինը: Դեռ պէտք է պարզել, թէ մենք ինչու այդքան զոհ տուեցինք եւ ինչու այդ զոհերը միայն անապահով ընտանիքի զաւակներն են: Ի՞նչ է օլիգարխները, իշխանաւորները այդ տարիքի զաւակներ չունե՞ն, թէ նրանք «վերին արտի ցորեն» են: Նրանց է վերապահուած շքեղ մեքենաներ վարել, բարձրակարգ ռեստորաններում ճոխ սեղանների շուրջ դիրքաւորուել, իսկ խեղճ ու անապահովները խրամատներում կանգնած պաշտպանեն հայրենիքը: Եւ դա էլ դեռ քիչ չէ, փամփուշտ չունենալու պատճառով ձեռնամարտի պատրաստուեն: Ըսէք այս որ դարում ենք ապրում, որ զինուորը փամփուշտի, իսկ տանկը վառելիքի պակաս ունենայ:

Սասունի, Զէյթունի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ նման իրավիճակ եղել է, բայց մենք այն ժամանակ պետութիւն չէինք, մեր իշխանաւորների զաւակները անգամ «հեծանիւ» չունէին: Իսկ հիմա շքեղ առանձնատների, բազմաթիւ «անձնական եկեղեցիների» աֆրիկեան ջունգլիներում գազանների որսի եւ այլ հաճոյքների վրայ հարիւր հազարաւոր տոլարներ ծախսող հարուստ նախագահներ ունենալով, չունենք ժամանակակից զէնք եւ զինամթերք: Անցեալում ինչպէս Մխիթար Սպարապետի ժամանակ, որտեղ նմանատիպ իրավիճակ էր ստեղծուել, եւ զինամթերքի անհրաժեշտութիւն կար, հայոց տիկնայք զոհաբերեցին իրենց ոսկեայ զարդերը յանուն հայոց բանակի զինմանը: Իսկ այսօր պէտք է ցաւով նշել, որ ոչ մի իշխանաւորի կին նման զոհաբերութեան չգնաց, այլ բաւարարուեց հիւանդանոց գնալով այցելել վիրաւոր զինուորներին: Եւ սելֆի անելով ցուցադրել իր առաքինութիւնը: Ու հիմա ոչ ոք պատասխան չի տալիս, թէ ինչու փամփուշտ չունէին մեր զինուորները եւ ինչու էին կռւում 80-ական թուականների զէնքերով: Իսկ ուր են մեր «մեծ եղբօր» Ռուսաստանի $200 միլիոնանոց արդիական զէնքերը (սմերջ, իսկանդար, սոլցեպիուկ): Թէ այս անգամ էլ կ'ասէք ռուսը ուշացաւ, ինչպէս սովետական բանակը՝ Սումկայիթում, երբ ուշացաւ, որի պատճառով հազարաւոր հայեր կոտորուեցին, Շահումեանը, Գետաշէնը եւ միւս շրջանները կորցրեցինք: Դեռ ինչքան պէտք է համբերենք որ հասկանանք որ մենք մենակ ենք եւ մեր յոյսը մեր վրայ պէտք է դնենք: Ինչպէս մեր հանճարեղ բանաստեղծն է ասել. «Հայ ժողովուրդ, քո փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»: Եւ դա բազմիցս ապացուցուել է: Հիմա նոյնպէս, քառօրեայ այս պատերազմում ողջ ժողովուրդը, թէ ներսում, եւ թէ սփիւռքում համախմբուեցին մէկ բռունցք դարձան եւ պատրաստ են իրենց կեանքը զոհաբերելու յանուն հայրենիքի: Բայց միթէ իշխանութիւնը դա պէտք է համարի, որ ներքին հարցերը մէկ կողմ են դրւում եւ բոլորը համախմբւում են իր շուրջը եւ ինքն էլ առիթից օգտուելով պիտի շարունակի երկիրը հայաթափել, մենաշնորհը զարգացնել, միլիոններ դիզել, դրանով իսկ երկրի վիճակը էլ աւելի վատթարացնել, առանց հասկանալու, որ Աստուած մի առասցէ մի քանի տարի յետոյ ազերիները նորից փորձեն ռազմական ճանապարհով լուծելու Արցախի հարցը՝ պաշտպանող չի լինելու: Թէ յոյսերը դրել են օլիգարխների զաւակների, թոռների վրայ: Յիշեցէ՛ք, այնքան քիչ էք լինելու, որ կորցնելու էք, ոչ միայն Արցախը, այլեւ Հայաստանը, թէ ձեզ միեւնոյն է լինելու գուցէ այդ ժամանակ էլ Երեւանը թողնէք եւ «հայդէ դէպի Փարիզ»: Մանաւանդ ձեզնից շատերը այնտեղ ունեն շքեղ առանձնատներ եւ միլիոնաւոր գումարներ: Բաւական է: Եկել է լրջանալու պահը ի սէր Աստծոյ, այս անգամ էլ մի կոտրէք համախմբումը, մի հիասթափեցրէք ժողովրդին: Սթափուէք, դարձի եկէք, շրջուէք դէպի ժողովուրդը, միասնաբար գործելու, մեր բանակը հզօրացնելու, մեր երկիրը երկիր դարձնելու սուրբ գործին: Գուցէ այն ժամանակ ձեր արածը ինչ որ չափով ձեզ ներուի Աստծոյ եւ ժողովրդի կողմից:

# Massis Weekly

Volume 36, No. 16

Saturday, April 30, 2016

## Over 60,000 Rally for Justice, Commemorate Armenian Genocide




LOS ANGELES -- Over 60,000 people peacefully rallied in front of the Turkish Consulate in Los Angeles to commemorate the 101st anniversary of the Armenian Genocide and protest the Turkish Republic's continued and multiplied efforts of denial on April 24, 2016, in front of the Turkish Consulate in Los Angeles.

H.E. Hovnan Derderian, Primate of the Western Diocese of the Armenian Church of North America, Archbishop Moushegh Mardirossian, Primate of the Western Prelacy of the Armenian Church of North America, Reverend Mikael Mouradian, Bishop of the Armenian Catholic Eparchy in the United States and Canada, and Rev. Berdj Djambazian opened the program with a prayer, while students from all Armenian schools from Los Angeles performed the Armenian and American National Anthems.

Dozens of federal, state and local officials rallied alongside the Armenian-American community, demanding justice, vowing to never forget and to continue the fight against the denialist agenda of the Turkish government.

Those who addressed the sixty thousand strong audience included representatives Adam Schiff, Loretta Sanchez and Tony Cadenas; California State Treasurer John Chiang, California State Assembly members Scott Wilk, Adrin Nazarian and Los Angeles City Council members Paul Krekorian and Paul Korets.

Speaking on behalf of Armenian Genocide Committee and the Armenian American community at large were; Ms. Tamar Poladian, Mr. Krikor Moloyan (see page 3) and Mr. Daron Der-Khachadourian, while Mr. Joseph Kaskanian spoke on behalf of the Armenian American youth.

The day's program, which included performances by Tro Krikorian and Ara Dabandjian, Nersik and Arabo Ispiryan, R-Mean, Armenchik and Harut Pamboukjian, was guided along by Mistress of Ceremonies Hoory Minoyan.

The show of unity, passion, and determination by the various Armenian Genocide Committee organizations as well as the audience overwhelmingly drowned out the denialist messages being spewed by few Turkish protesters along with their paid for aerial propaganda campaign. Rather the presence of deniers and their propaganda invigorated the more than sixty thousand strong in attendance.

The presenter and the audience showed solidarity with Artsakh, and reminded the world that Armenians will not stand idle as their brethren face military aggression from Azerbaijan. Artsakh, which endured a massive and savage attack by Azerbaijani forces in the beginning of the month, the likes of which have not been seen since the 1994 cease fire agreement, reminded Armenian American what their ancestors went through in 1915 is still possible in today's world.

Representatives leading Greek, Assyrian, Yezidi, Jewish, Kurdish, South Asian, Seikh organizations, as well as labor unions and student groups, partnered with the Armenian Genocide Committee, and their presence was felt at the Rally for Justice.

## Statement by President Barack Obama on Armenian "Remembrance Day"

Today we solemnly reflect on the first mass atrocity of the 20th century—the Armenian Meds Yeghern—when one and a half million Armenian people were deported, massacred, and marched to their deaths in the final days of the Ottoman empire.

As we honor the memory of those who suffered during the dark days beginning in 1915—and commit to learn from this tragedy so it may never be repeated—we also pay tribute to those who sought to come to their aid. One such individual was U.S. Ambassador Henry Morgenthau, Sr., who voiced alarm both within the U.S. government and with Ottoman leaders in an attempt to halt the violence. Voices like Morgenthau's continue to be essential to the mission of atrocity prevention, and his legacy shaped the later work of human rights champions such as Raphael Lemkin, who helped bring about the first United Nations human rights treaty.

This is also a moment to acknowledge the remarkable resiliency of the Armenian people and their tremendous contributions both to the international community as well as to American society. We recall the thousands of Armenian refugees who decades ago began new lives in the United States, forming a community that has

Continued on page 4

## Armenia Commemorates 101st Anniversary of Genocide
### Actor-Activist George Clooney Joins Genocide Commemoration

YEREVAN -- Armenia commemorated the 101st anniversary of victims of the Armenian Genocide as tens of thousands of people marched on Sunday to the hilltop Genocide Memorial at Tsitsernakaberd in Yerevan.

The annual day-long procession followed a prayer service led by Catholicos Garegin II, the supreme head of the Armenian Apostolic Church, attended by the leadership of Armenia, international guests, diplomatic representatives, Armenian nationals and Diaspora representtaives.

"More than a century has passed since the genocide," President of Armenia Serzh Sarkisian said in a written address to the nation. "What has changed? First of all, we have changed. We have been reborn as a nation and as a state. We have proved to ourselves and the world that the Turkish genocidal plans failed."

"What has not changed is Turkey's denialist stance and hostile attitude towards everything Armenian" he went on. "This is a direct continuation of the crime going on nowadays."



Sarkisian stressed at the same time that unlike Turkey's government and policy-makers, "the Turkish society has partly changed" with regard to the genocide issue. "Today it knows more about Turkish history than it did yesterday," he said. "Tomorrow it will know even more than it does today, unless, of course, they strangle free speech and media, shoot and arrest parliamentarians, public figures and editors."

Actor-Activist George Clooney,

Continued on page 4

## Genocide Denialist Target Little Armenia




HOLLYWOOD -- On Friday April 22, the Armenian Council of America (ACA) was informed by its membership that Turkish denialist have targeted the "Little Armenia" neighborhood in Los Angeles California. The denialists were gluing posters on various walls in the neighborhood promoting 'Fact Check Armenia" which denies that the genocide of Armenians by the Ottoman Empire took place, contrary to the consensus of most historians.

As an ACA member attempted to

Continued on page 4

## Armenian Genocide Commemorated in Istanbul



ISTANBUL (Combined Sources) -- Representatives of Turkey's Say Stop to Racism and Nationalism (DurDe) platform, European Network Against Racism (ENAR), Turkey's Human Rights Defense Union and New Awakening gathered Sunday at Istanbul's Kabatas station to honor the memory of the Armenian Genocide.

They carried posters condemning and urging to acknowledge the Armenian Genocide, as well as photos of Armenian intellectuals who were arrested and sent to death on 24 April 1915.

The participants thereafter marched to Haydarpasa train station, from where the Armenian intellectuals were sent to death by train on the same day.

Turkish human rights defender Eren Keskin read out an announcement in Armenian, Turkish and English on behalf of those gathered.

He stressed that the denial of the Armenian Genocide, which is a crime against humanity, continues the crime.

By the end of the commemoration event, the participants threw white carnations into the sea.

On Saturday, the Istanbul civic group Saturday Mothers/People organized a public event in the city's Galatasaray Square, calling upon the Turkish society to confront its past.

The organizers carried photos of the Armenians killed on April 24, 1915.

The event was attended by Sezgin Tanrikolu, a deputy leader of the People's Democratic Party, Karo Paylan, Armenian parliament member elected from the Pro-Kurdish Peoples' Democratic Party, representatives of the Armenian General Benevolent Union and the organization Fight Against Racism in Europe.

In his speech at the ceremony, Paylan urged for efforts to eternalize Armenians' memory in those Turkish towns and cities that saw tragic massacres more than 100 years ago . "We want our ancestors' bodies; we want tombstones to be built," he said.

## Garo Paylan Calls for Investigation on Ottoman-Armenian Parliamentarians Killed in 1915



ANKARA -- HDP Istanbul MP Garo Paylan suggested forming a parliamentary commission for carrying out an investigation on 7 Armenian members of Chamber of Deputies of Ottoman Parliament who served in 1908-1915 and killed after being arrested on April-May 2015.

Garo-Paylan-MeclisIn his address to Parliament, Paylan read the names and displayed the photographs of several Armenian politicians killed, arrested, or exiled in the Armenian Genocide, including Krikor Zohrab (Istanbul), Bedros Haladjian (Istanbul), Nazaret Daghavarian (Sivas), Garabed Pashaian (Sivas), Ohannes Seringiulian (Erzurum), Onnik Tersekian (Van), Hampartsum Boyadjian (Kozan), Vahan Papazian, Hagop Babikian (Tekirdag), Karekin Pastermadjian (Erzurum), Kegham Der Garabedian (Mush), Hagop Boyadjian (Tekirdag), and Artin Boshgezenian (Aleppo). Paylan also detailed the fate of each Armenian politician during the Armenian Genocide. He also demanded proper burials for them.

During his address, which he began with the Armenian greeting "Barev dzez," Paylan condemned the murder of the politicians and said that the Turkish state should come to terms with its history. He also ended his address with the Armenian phrase "Astvats irents hogin lusavori" ("May God illuminate their souls").

## Marguerite Barankitse Awarded Inaugural Aurora Prize for Awakening Humanity



YEREVAN, -- Marguerite Barankitse from Maison Shalom and REMA Hospital in Burundi was named as the inaugural Laureate of the $1 million Aurora Prize for Awakening Humanity. At a ceremony held in Yerevan, Armenia, Barankitse was recognized for the extraordinary impact she has had in saving thousands of lives and caring for orphans and refugees during the years of civil war in Burundi.

As she accepted the award from Aurora Prize Selection Committee Co-Chair George Clooney, Barankitse said: "Our values are human values. When you have compassion, dignity and love then nothing can scare you, nothing can stop you – no one can stop love. Not armies, not hate, not persecution, not famine, nothing."

As the first Aurora Prize Laureate, Barankitse will receive a $100,000 grant and continue the cycle of giving by donating the accompanying $1,000,000 award to organizations that have inspired her work. Barankitse plans to donate the award to three organizations in order to advance aid and rehabilitation for child refugees and orphans, and fight against child poverty. These organizations are: the Fondation du Grand-Duc et de La Grande-Duchesse du Luxembourg, Fondation Jean-François Peterbroeck (JFP Foundation), and the Fondation Bridderlech Deelen Luxembourg.

Baranktise emphasized: "I chose them because these people supported me and never abandoned me, even in difficult times. They have the same values as me and as the Maison Shalom – compassion, friendliness, dignity, and a generosity which costs nothing."

"Marguerite Barankitse serves as a reminder of the impact that one person can have even when encountering seemingly insurmountable persecution and injustice," said Mr. Clooney. "By recognizing Marguerite Barankitse's courage, commitment and sacrifice, I am hopeful that she can also inspire each one of us to think about what we can do to stand up on behalf of those whose rights are abused and are in most need of our solidarity or support."

Marguerite Barankitse saved thousands of lives and cared for orphans and refugees during the years of civil war in Burundi. When war broke out, Barankitse, a Tutsi, tried to hide 72 of her closest Hutu neighbors to keep them safe from persecution. They were discovered and executed, whilst Barankitse was forced to watch. Following this gruesome incident, she started her work saving and caring for children and refugees. She has saved roughly 30,000 children and in 2008, she opened a hospital which has treated more than 80,000 patients to date.

Guests also celebrated the exceptional contributions of the other three finalists for the Aurora Prize: Dr. Tom Catena, from Mother of Mercy Hospital in the Nuba Mountains of Sudan; Syeda Ghulam Fatima, the General Secretary of the Bonded Labour Liberation Front in Pakistan; and Father Bernard Kinvi, a Catholic Priest in Bossemptele, Central African Republic (CAR). To mark the occasion of the inaugural Aurora Prize Ceremony, these exceptional humanitarians will be presented with a $25,000 award from the Aurora Prize co-founders to support the organizations that have inspired their work.

Leading humanitarian figures and Aurora Prize Selection Committee members, including Gareth Evans, Hina Jilani, Leymah Gbowee, Shirin Ebadi and Vartan Gregorian, attended and participated in the Aurora Prize Award Ceremony.

"During the selection process for the Aurora Prize, we came across truly remarkable stories of the human spirit, and an extraordinary number of inspiring individuals who are out there making a signficiant difference," said Vartan Gregorian, member of the Aurora Prize Selection Committee and co-founder of 100 LIVES. "We are proud to be able to recognize Marguerite Barankitse and support the impactful work she is doing in a concrete way. She proves the tremendous impact one person can have on so many."

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

# Pasadena Community Commemorates 101st Anniversary of Genocide



PASADENA- Over 250 members of the community, elected officials, activists, friends and supporters of the Armenian Cause gathered to remember the 1.5 million lives lost during the Armenian Genocide by the Ottoman government during World War I at Memorial Park on April 23.

The candlelight vigil, organized by the Armenian Council of America (ACA), Gaidz Youth Organization (GYO) and Armenian Athletic Association (Homenmen) marks the 101st anniversary of the Genocide.

GYO members Alison Ghafari and Ani Apyan delivered a message from GYO, reminding the audience the importance of continuing to pay homage to the Genocide victims and survivors and remembering the past, so that history will not repeat itself in the future. Following the message was a recital of Silva Kapoutikyan's "Retort" and Paruyr Sevak's "We Are Few, But We Are Armenian," by Ani and Anna Apyan.

The Nor Serount (New Generation) Cultural Association Dance Troupe eloquently performed beautiful dances to somber music and patriotic songs performed by Vako Cholakian and Arno Mkrtchyan energized the audience made up of young and old, Armenians and non-Armenians, as they sang in unison and proudly waved the Armenian flag.

Among elected officials in attendance were Los Angeles County Supervisor Michael Antonovich and Pasadena City Councilmember Gene Masuda. Mayor Terry Tornek dedicated a proclamation to ACA from the City of Pasadena, which declared April 24 as the "Day of Remembrance of the Armenian Genocide."

On behalf of ACA, Courtney Tossounian thanked the elected officials in attendance and discussed the importance of having hope for a better future, as survivors of the Armenian Genocide had very little to hold onto, but hope. "We did not only survive, but we thrived and we will continue to thrive," added Tossounian.

In his address to the audience, Supervisor Antonovich reaffirmed his long standing support for the Armenian American community and pledged to continue to support the Armenian Cause. Supervisor Antonovich also announced that next year, a permanent display will be placed at Grand Park in Los Angeles to honor the victims of the Armenian Genocide.

The evening concluded as members of the audience placed flowers and wreaths at the Armenian Genocide Memorial monument which was erected as a permanent display in 2015. "We would like to express our gratitude to the Pasadena community took part in this event," said ACA Chairman Sevak Khatchadorian. "The vigil not only paid homage to our Genocide victims and survivors, but it was also a good example of the power of the Armenian community when we remember our past and demand justice."



Ձեր Ծանուցումները Կատարեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

# Krikor Moloyan's Message



Dear members of the clergy, elected officials, supporters and friends of the Armenian Cause.

Today, we stand here together on the One Hundred and First Anniversary commemorating the Armenian Genocide.

On this solemn day, we stand together as one, in solidarity, to overcome those who deny the pain, suffering and annihilation of our ancestors.

At this very moment, Turkey is systematically operating a well-funded campaign of Genocide denial. A campaign where they spread a false and distorted history throughout the world.

Yet through our collective perseverance, countries are now standing up to the long reigning policy of silence and censorship on the G-word, that is, Genocide.

My dear brothers and sisters! Germany is set to vote on the recognition of the Armenian Genocide on June Second. I say: What took you so long!? What took Germany so long to recognize a fact? When young German officers and future Nazis put into practice what they had seen in 1915 against the Jews in 1945.

The same should be said for Israel, a country whose ancestors felt the pain and suffering of death camps, and what it means to be alone in the world.

For decades, the United States government has used geopolitics as a scapegoat to avoid the recognition of a fact, Genocide. Just a few days ago, President Obama, the symbol of hope eight years past, yet again failed to stand by his pledge as Senator. Especially in his last year in office and still afraid of offending his NATO ally.

Our path to justice is clear. No President's, Prime Minister's or Chancellor's use or non-use of the word Genocide, can change that fact. Cowardly statements by weak heads of state and fickle members of parliament empower us. Empower us to stand together, united, to fight for the imperative prevention of all genocides. In Syria, Sudan, in Iraq, Somalia and Myanmar, in Nigeria and Burundi.

Any nation, that claims to cherish humanity above all else has a duty to recognize and prevent, the deliberate and systematic destruction of an ethnic group.

Currently, our struggle with Turkey is an ideological one, based on their false dogmas, that is to discredit their revisionist history. On the other hand our very real struggle with Azerbaijan is to protect our ancestral land of Artsakh from an aggressive and highly militarized Azeri dictatorship.

The savagery committed by Azerbaijan's forces against ethnic Armenian civilians, is a chilling reminder of the same heinous acts that our ancestors fell victim to One Hundred and One years ago by the Ottoman government.

Nonetheless, this did not deter the courageous people of Armenia and Artsakh. Thousands of volunteers enlisted to fight and Azerbaijan witnessed the Resilience and Power of a united Armenian people.

But that was just a small fraction of our united potential.

Our beautiful motherland gained independence a little over two decades ago and yet struggling down the road of democracy and a transparent government is imperative to the progress and prosperity of our compatriots.

As Diasporan Armenians, we have a duty and moral obligation to ensure that government officials serve the public and are held accountable.

A democratically free Armenia is a strong Armenia. That strong Armenia is a crucial element in demanding the international community to recognize and atone for the century of denial.

Today's Turkish government is afraid; because the geopolitical landscape of the Middle East and the Caucasus is changing. Turkey can no longer claim to be that shining beacon of democracy. Western governments have finally come to realize Turkey has and continues to discriminate against its own citizens, persecute ethnic and religious minorities, and harass those who have the courage to criticize the government.

Today, in the twenty first century, journalists in Turkey are either imprisoned, as was the case of Sevan Nisanyan and countless others, or in the case of Hrant Dink, assassinated.

There are glimmers of hope: many Turkish scholars, politicians, and journalists have come forward and courageously declared in public their opposition to the Turkish government's denial of the Armenian Genocide. The Turkish public is now facing an identity crisis which had been seething and simmering for the past one hundred years. A question: who is a Turk? Are they denialists and revisionists? Supporters of Genocide? Hrant Dink and his peers have tirelessly educated young and progressive Turks. They forced this very question onto the public consciousness. There are Turks who say the Genocide should be recognized and the Turkish government should atone for its century of denial. We need to support these progressive Turks who are on the right side of history because the government of Turkey is scared of the truth. The truth that IS the Armenian Genocide.

The Turkish government knows that it is only a matter of time…

We will have the RECOGNITION of the Genocide of our ancestors.

We will have the REPARATIONS of our lands, churches, schools and institutions.

And we will have the RESTORATION of a strong and unified Armenian Nation.

## AGBU 110 Celebrations in Los Angeles

On April 24, 2016, the world watched as Ruben Vardanyan, the co-founder of the 100 Lives initiative, along with Academy Award winning actor George Clooney, awarded a Burundi woman the Aurora Prize of $1.1 million for her humanitarian efforts of aiding thousands of orphans. The Aurora Prize for Awakening Humanity is part of the 100 Lives initiative established by The Initiatives for Development of Armenia (IDeA) Foundation co-founded by Mr. Vardanyan.

On May 1, 2016, the AGBU Western District Committee will host Mr. Vardanyan as its Marquee Speaker at the celebration of AGBU's 110th Anniversary. The evening will also feature various performers including pianist Hayk Arsenyan and cellist Armen Ksajikian. Guests will also enjoy a Mixed Art Exhibit by both, world renowned artists, as well as, amateurs of all ages.

The event will take place on the 11th floor of The Reef, located at 1933 South Broadway, Los Angeles, CA 90007. The program will begin at 5 p.m. Admission to the event is free and open to the public. Kindly RSVP by Wednesday, April 27th by calling the AGBU Western District office at 626-794-7942 or by emailing 110@agbuca.org.

## Statement by President Barack Obama

**Continued from page 1**

enormously advanced the vitality of this nation and risen to prominence and distinction across a wide range of endeavors. -

As we look from the past to the future, we continue to underscore the importance of historical remembrance as a tool of prevention, as we call for a full, frank, and just acknowledgment of the facts, which would serve the interests of all concerned. I have consistently stated my own view of what occurred in 1915, and my view has not changed. I have also seen that peoples and nations grow stronger, and build a foundation for a more just and tolerant future, by acknowledging and reckoning with painful elements of the past. We continue to welcome the expression of views by those who have sought to shed new light into the darkness of the past, from Turkish and Armenian historians to Pope Francis.?

Today we stand with the Armenian people throughout the world in recalling the horror of the Meds Yeghern and reaffirm our ongoing commitment to a democratic, peaceful, and prosperous Armenia.

President Barack Obama

## Armenia Commemorates Anniversary of Genocide

**Continued from page 1**

along with international dignitaries, attended the annual commemoration service at Tsitsernakaberd. Clooney wore the Armenian remembrance brooch -- a purple forget-me-not flower -- on his jacket.

The Oscar-winning actor called for greater international recognition of the Armenian genocide and said the 1915 slaughter of some 1.5 million Armenians is "also a part of the world's history" when he addressed an international conference on genocide prevention held in Yerevan on Saturday. "When someone is trying to annihilate a whole human race, culture, people, that's genocide, there can be no other version of it," he declared.

"I think it is ridiculous not to talk about it in terms of genocide, because, of course, it was," Clooney added in a clear reference to Turkey's continuing vehement denial of the Armenian genocide.

## Genocide Denialist Target Little Armenia

**Continued from page 1**

remove posters adjacent to Congressman Adam Schiff's disctrict office, she was confronted by three individuals in a van, who claimed to be working with the Armenian Government promoting peace between the two nations by putting up the posters. Yet the two men and one woman could not address simple questions about Armenians or even the Armenian government, nor would they provide contact information regarding their initiative.

Elected officials representing "Little Armenia" vehemently condemn such actions of the denialist when they were informed by ACA of what was transpiring.

"It's offensive to see Genocide denial propaganda on the same streets where this weekend tens of thousands will march to remember the Armenian Genocide," said Congressman Adam Schiff (D-CA 28th District). "So long as we raise our voices to speak the truth, the campaign of denial by Turkey and its allies will never succeed," added Congressman Schiff.

"Posting these absurd signs promoting the denial of the Armenian Genocide is inaccurate and distasteful," said Assemblyman Mike Gatto (D-Los Angeles). "There is no room in my district or in California for individuals to wrongfully distort the Armenian Genocide."

"The City of Los Angeles has unequivocally voiced its recognition of the Armenian Genocide committed by the Ottoman Empire in 1915, and its support of the Armenian-American community's efforts for justice and recognition by our Federal government." said Los Angeles City Councilmember Mitch O'Farrell. "This campaign of denial does not change historical truths and is detrimental for the creation of peace and mutual understanding between Armenia and Turkey."

Earlier this month, "Fact Check Armenia" paid for a billboard with a similar ad to be placed near Boston's Armenian Heritage Park, and different parts of the country including New York and San Francisco.

## Falafel Arax® Restaurant Announces Multi-Location Eexpansion Plans with Grand Opening of Second Location in Glendale

GLENDALE -- On a bright sunny day with red and white themed decorations, Falafel Arax® celebrated grand opening of its new restaurant located at 625 E. Colorado Street in Glendale, California. "We are excited to announce the expansion of Falafel Arax® restaurants with our new look and expanded menu with many healthy options to initially serve Southern California with plans to expand nationwide," explained Gerard V. Kassabian, Esq., President of Falafel Arax, Inc., which is the recently formed expansion company.

The grand opening guests enjoyed the world famous Falafel Arax® falafel as well as other delicious Mediterranean foods available on the newly expanded food menu containing traditional and contemporary Mediterranean foods, which can be viewed online at www.FalafelAraxUSA.com. The tantalizing offerings were stylishly arranged and displayed by Gourmet 47 Catering including a charming tahini fountain for the falafels on a stick. The guests were entertained by live musical entertainment by the jazz trio String Harmonies.

Falafel Arax® offers a selection of dining options with ample seating for 34 guests on nine tables with snow white tops, two of which are in cozy booths. A clean stainless steel counter top with the signature red and white stripes underneath welcomes guests to the digital menu displays that show mouthwatering images of menu items for in-house dining or take-out. The uniformed staff greet the customers with a smile and accept orders on modern cash registers with cutting edge technology that accept credit cards and email receipts. The dining room is bright and fresh with one wall decorated with the signature red and white theme and another wall with natural wood that is soothing and comfortable for guests to enjoy a meal with contemporary background music. A display case beside the soda fountain offers hats, t-shirts and other apparel for sale with the distinctive new Falafel Arax® logo.

Executive Chef Daniel Hobeika leads the Falafel Arax® kitchen with an eye for perfection. "My team and I pride ourselves with fresh foods prepared daily using top quality ingredients from local vendors and, most importantly, we never take shortcuts on quality or execution," explained Chef Daniel who hand selects all ingredients to ensure everything tastes and looks as it should.

The Falafel Arax® signature menu items are Falafel, Shawerma Beef and Chicken, Chicken Rotisserie, Soujouk (Spicy Sausage), Hummus, Mutabbal, Fattoush Salad, Tabboule and other Mediterranean favorites.

Open seven days a week with extended hours, Falafel Arax® is located in the heart of Glendale at 625 E. Colorado Street, Glendale, California 91205.



# ԱՐՑԱԽԵԱՆ ՉՈՐՍՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՅԱՋՈՐԴ ՓՈՒԼԸ

*ՍԱԳՕ ԱՐԵԱՆ*

Արցախեան չորսօրեայ պատերազմը կը գտնուի մեր ետին: Հակամարտող կողմերը կը շարունակեն իրենց կրած մարդկային կորուստները ներկայացնել: Վերջին տուեալներով հայկական բանակը ունի 95 զոհեր, մինչ Ատրպէյճանի մեզի յայտնի լրատուամիջոցները հատ ու կենտ տեղեկութիւններ տալով կը շարունակեն մշուշապատ մթնոլորտ մը ստեղծել իրենց ունեցած մարդկային կորուստներուն մասին:

Զինուորական լրագրութեան յայտնի կանոններուն համաձայն նախայարձակ եղած կողմը պէտք է առնուազն եռապատիկ աւելի զոհ ունենայ քան պաշտպանուող կողմը: Սա արդէն կը նշանակէ, որ Ատրպէյճանի բանակին զոհերը կրնան հասնիլ 300-ի: Հայկական ճակատին վրայ տարբեր մեկնաբաններ Ատրպէյճանի շղթայազերծած գրոհը կը ներկայացնեն որպէս արագ հարուածով մը հայկական սահմանապահ գիծերէն ներս շրջաններ գրաւելու փորձ, որմէ ետք Պաքու հրադադարի մը տենչալով պիտի փորձէր նոր սթաթուսքօ մը ստեղծել: Բայց այդպէս չեղաւ: Հայկական կողմին արագ հակահարուածը, ոչ միայն ծանր կորուստներ կը պատճառէր ատրպէյճանական կողմին, այլ կը յաջողէր հրադադար պարտադրել: Երեքշաբթի, 5 Ապրիլի կէսօրին մինչ արաբական ռուսամէրձ «Ալ Մայատին» կայանը արագ տրուած լուրով մը Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւին կողմէ կատարուած յայտարարութիւն մը կը հրապարկէ, անդին Մոսկուա կը խօսէր հրադադարի շուրջ եղած պայմանաւորուածութեան մը մասին: Հակամարտող կողմերէն աւելի Մոսկուա կտրականապէս դէմ է, որ Կովկասը դառնայ զինուորական հակամարտութեան նոր օճախ: Հայաստանի մէջ, հայկական բանակի ունեցած ծանր կորուստէն ետք պետական աւագանին եւ զինուորական բարձրագոյն մարմինները Ատրպէյճանի առկայ բոլոր «կարմիր գիծեր»ը հատելու անկանխատեսելի որոշումէն ետք կը հաւատային, որ Հայաստանն ու Արցախը կանգնած են նոր պատերազմի մը դիմաց: Ժամերու ընթացքին եւ տրամաթիք արագ մագլցումէ ետք հայկական կողմին համար նոյնպէս պատերազմի մէջ մտնելու ընտրանքը բացորոշ էր: Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի ԵԱՀԿ-ի անդամ երկիրներու դեսպաններուն հետ հանդիպումէն ետք տրուած ասուլիսը ու աւելի ուշ գերմանական մամուլին տուած հարցազրոյցներու տողատակին հեշտ էր կարդալ, որ Հայաստան վճռած է բուռն կերպով պատասխանել եղածին: Բացի ատկէ ՀՀ նախագահը կը մեղադրէր Մոսկուան հակառակորդ Ատրպէյճանին արդիական զէնքեր ծախելուն մէջ: Ճիշդ է, որ այս առաջին անգամը չէ, որ ՀՀ նախագահը նման խնդիր մը կը ներկայացնէր, բայց պատերազմական իրադրութեան մէջ նման յայտարարութիւն կատարելը այլ հնչեղութիւն ունէր: Այս տուեալները նշեցի ներկայացնելու համար հայկական կողմին մօտ երեւցած գերլարուած իրավիճակը եւ պատերազմի երթալու վճռակամութիւնը: Տեղին է նշել, որ դէպքերու ընթացքին հետեւող տարբեր լրագրողներ հրադադարի վերահաստատումէն օրեր ետք կը գրէին, որ հայկական ուժերը կը գտնուէին ատրպէյճանական ուժերուն ծանր հարուածներ տալու դիրքի մը մէջ, երբ Մոսկուայէն կը հնչէր կայացուած հրադադարի մասին յայտարարութիւնը:

Անցնող օրերուն Արցախի հիմնական ճակատներուն վրայ զգուշաւոր հանդարտութիւն կը տիրէ: Երեւելի է նաեւ, որ ատրպէյճանական ուժերը կը շարունակեն խախտել հրադադարը, բայց եւ այնպէս խախտումներու ընդհանուր պատկերը մեծ գործողութիւններու ճանապարհ բացող կրակահերթ չէ: Բացի ատկէ բնական է, որ Մոսկուա



ինք ստանձնած է «վարել» ղարաբաղեան հակամարտութեան այս փուլը: Նոյնը կարելի է լսել Ռուսիոյ նախագահին բերնէն, որիր Հինգշաբթի օր տուած ամէնամեայ մամլոյ ասուլիսի ընթացքին կը

Շար.ը էջ 18



# ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԱԶԳԻՆ ԱՊԱԳԱՆ Է

*ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ*

Ազգի մը այսօրուան երիտասարդները վաղուան առաջնորդներն են, անոր ղեկավարները, արտադրող մասնագէտները ու գործիչները: Մեզի համար, ազգին պատմութեան լաւատեղեակ, ազգային հոգուով տոգորուած, ազատամիտ եւ զարգացած գաղափարախօսութեամբ սնած, ժամանակակից ճարտարարուեստին եւ արհեստագիտութեան յարմար լաւ ուսում ստացած սերունդ մը պէտք է պատրաստել, որ կարենայ մեր ազգը ղեկավարել Ցեղասպանութեան երկրորդ հարիւր ամեակին. սակայն մենք իբր ազգ, որքանո՞վ հետաքրքրուած ենք այդ բոլորով եւ գործադրած զանոնք:

Հայոց Ցեղասպանութեան հարուածը շատ ուժգին էր. հայրենիք, մշակութային հարստութիւն, անշարժ գոյքերու կորուստ, թալան եւ վերջապէս մէկուկէս միլիոն սրբացուած նահատակներ, որոնց մաս կը կազմէին պատրաստուած եւ զարգացած ամբողջ սերունդ մը, որ իր կարգին բնաջնջուեցաւ: Ցեղասպանութենէն յետոյ, առաջին յիսուն տարուան ընթացքին ինքնապահպանումն էր կարեւորը, ազգի գոյատեւումը. 1965թ. էր, երբ աշխարհացրիւ հայութիւնը բռնկեցաւ եւ այդ ժամանակուան սերունդը պոռթկաց ու յաղթահարեց իր դժուարութիւնները. մենք կրկին ունեցանք պատրաստուած խաւ մը, հայրենիքէն ներս եւ դուրս, թէեւ՝ տարբեր գաղափարախօսութիւններով:

Ցեղասպանութեան երկրորդ յիսնամեակին շատ աւելին կ՛ակնկալուէր երիտասարդութիւն պատրաստելու առումով, սակայն այդ մէկն ալ իր դժուարութիւնները ունեցաւ. Միջին Արեւելքի հայկական գաղութները, Եգիպտոս, Լիբանան, Իրաք եւ վերջերս Սուրիա. կրկին գաղթ, բայց այս անգամ՝ քիչ մը մեղմ, օտարամոլութիւն ու սպիտակ ջարդ. Հայաստանը քաղաքական իմաստով կաշկանդուած էր. հոն ազգայնական ոգին կարելի չէր դրսեւորել, սակայն մշակութային, գիտական եւ այլ մարզերու մէջ զարգացած սերունդներ պատրաստուեցան. այդ սերունդները շատ առիթ չունեցան ազգային խոր գիտակցութեամբ դաստիարակուելու, բայց եւ այնպէս, Արցախը անոնց հզօր մասնակցութեամբ ազատագրուեցաւ:

Ցեղասպանութեան երկրորդ հարիւրամեակի սկիզբին, ազգովին շատ ընելիքներ ունինք եւ առաջին հերթին՝ հայրենիքէն ներս եւ Սփիւռքի մէջ նոր սերունդ պատրաստելը: Երկրի մը, ազգի մը հիմնական հարստութիւնը մարդ էակն է. ան երկրի մը գլխաւոր հարստութիւնն է եւ այդ մարդը պատրաստե՛լ պէտք է: Հայ երիտասարդը պէտք է հպարտ ըլլայ իր հայութեամբ. եթէ Հայաստանի մէջ է, լաւ հայ ըլլալու է, իսկ եթէ Սփիւռքի մէջ է, ապա լաւ հայ եւ լաւ տեղացի ըլլալու է նոյն ժամանակ, առանց շփոթուելու արդիականացման եւ օտարացման միջեւ: Միջին Արեւելքի մէջ ապրող հայութիւնը ձուլման մեծ վտանգներ չէ ունեցած, պարզապէս՝ շրջանակը օտար ազգէ եւ կրօնքէ էր. ԱՄՆ-ի եւ Եւրոպայի մէջ կրօնքը նոյնն է, իսկ ազգութիւն փնտռողները քիչեր են: Ափսոս, հայրենիքէն ներս եւս սերունդներ այդ անտարբեր մտայնութեամբ հասակ առին, սակայն կը թուի, թէ ներկայ սերունդը աւելի կը կառչի իր արմատներուն: Հայ երիտասարդը ծայրայեղ ըլլալու կարիքը չունի, սակայն լա՛ւ պէտք է ըմբռնէ, որ իր ազգին ճակատագիրը ուրիշ է: Հայկական պետութիւնը, կազմակերպութիւնները, կուսակցութիւնները, եկեղեցիները, դպրոցները եւ այլ հաստատութիւններ, ինչպէս նաեւ հայ ընտանիքը, պէտք է ամրապնդեն հայկական ոգին երիտասարդին մէջ, առանց զայն կղզիացնելու կամ իր միջավայրէն անջատելու:

Հայ եկեղեցին պէտք է պատրաստէ ներկայ ժամանակներու ոգին հաղորդող եւ ժամանակակից հարցերու լաւ ըմբռնում դրսեւորող կղերականներ, որոնք պատրաստակամութիւն ունենան հայ երիտասարդին հետ իրենց կապերը ամրապնդելու:

Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման կողքին, հատուցումի պահանջ ունինք, հողերու եւ իրաւունքներու վերադարձ, նաեւ՝ Թուրքին արժանի պատիժի պահանջ (Recognition, Reparation, and Retribution): Մեր ազգին անհրաժեշտ է իր ունեցածէն աւելի՛ մեծ թիւով միջազգային մասնագէտ իրաւաբաններ, պատմաբաններ եւ քաղաքագէտներ: Մեր դարաւոր թշնամին միլիոններ կը ծախսէ եւ իր հզօր քարոզչութեամբ կը փորձէ խեղաթիւրել ցեղասպանութեան իրականութիւնը: Մենք արդիական լրատուական միջոցներու մասնագէտներու սուր կարիքը ունինք՝ թշնամիի այդ հզօր մեքենականութեան դէմ կանգնելու: Պէտք է 21րդ դարու ոգիով եւ մտայնութեամբ գործել: Բժշկական, արուեստագիտական, երկրաչափական եւ այլ դասական մասնաճիւղերու առաւել հետեւողներու կարիք ունինք, եւ ի մասնաւորի՝ ժամանակակից ճարտարարուեստի մասնա-գէտներու:

Մայքրոսոֆթ-ի (Microsoft) հիմնադիրը (Bill Gates) միլիառատէր է. ան քարիւղի կամ որեւէ բնական հարստութեան հանք չունի. նմանապէս՝ Facebook-ի տէրը (Zuckerberg), եւ իրենց նման ուրիշներ... Ինչո՞ւ այս օրինակները. որովհետեւ Հայաստանը, թէեւ երկրագործութեան մարզին մէջ բաւական լաւ հնարաւորութիւններ ունի, սակայն բնական ստորգետնեայ մեծ հարստութիւններ չունի. այնուամենայնիւ՝ երիտասարդ ուժ ունի. հայը խելացի՛ է, ստեղծագո՛րծ է, ամէն տեսակի նորութիւններու եւ նոր ճարտարարուեստի ու արհեստագիտութեան ընդունակ է. ներկայիս արդէն իսկ տեղեկատուական ճարտարարուեստը (IT-Information Technology) բաւական լաւ սկիզբ առած է Հայաստանի մէջ, ուր նոյնիսկ օտար ընկերութիւններ մուտք գործած են: Կը մնայ, որ աշխատունակ ու զարգացած երիտասարդներ ունենանք, որպէսզի առաւե՛լ յառաջացնեն այդ աշխատանքը: Համացանցը (Internet) ներկայիս թուայնացուած տեղեկատուութեանց (digitalized information) անմիջական հաղորդակցութեան միջոց մըն է. անոր կողքին են՝ Twitter, Facebook, Instagram եւ նման ցանցեր. աւելին՝ e-readers, smart phone, tablets, iPod եւ այլն... բոլորն ալ գերազանց եւ ապշեցուցիչ հնարքներ են. այս բոլորին պէտք է ընտելանայ նոր սերունդը եւ անոնք իր աշխատանքին ու առօրեայ կեանքին մաս կազմեն. փոփոխութիւնները շատ արագ տեղի կ՛ունենան, ուստի՝ ժամանակ չունինք կորսնցնելու:

Որո՞ւն պարտականութիւնն է զարգացած հայ նոր սերունդ պատրաստել:

Ի հարկէ՝ բոլորի՛ն. Հայաստանի պետութեան, հայկական կազմակերպութիւններուն, կուսակցութիւններուն, եկեղեցիներուն, մեծահարուստներուն, մտաւորականներուն, արուեստագէտներուն, մէկ խօսքով՝ բոլոր հայութեան: Ժամանակին, քարիւղի հանքերու տէր մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշովը կ՛որդեգրէր տարեկան 200 ուսանող, որոնց մեծ մասը կ՛ուսանէր արտասահմանի մէջ: Այդ ուսանողներէն էին՝ Կոմիտասը, Արմենակ Շահմուրադեանը, Սիամանթօն, Ալեքսանդր եւ Կոնստանդին Խատիսեան եղբայրները, Ստեփան Շահումեանը եւ ուրիշներ. ներկայիս, մենք մեր ունեցածէն ա՛լ աւելի նոր Մանթաշովներու կարիքը ունինք:

Մեր ազգը նաեւ պահանջ ունի նորանոր արդիական կրթական հաստատութիւններու: Հայաստանի Ամերիկեան Համալսարանը (AUA), Դիլիջանի միջազգային դպրոցը (United World College Dilijan, Dilijan International School), **ԹՈՒՄՕ** ստեղծարար արհեստագիտութիւններու կեդրոնը, (Tumo Center for Creative Technologies), որ ըստ ֆրանսական "We Demain" ամսաթերթին՝ աշխարհի ամէնէն նորարար դպրոցներու առաջին դիրքին վրայ է, նաեւ՝ **ՀԲԸՄ**-ի կրթական օճախները՝ հայրենիքէն ներս թէ դուրս, Լիբանանի Հայկազեան համալսարանը եւ այլ կրթական հաստատութիւններ, թափ կու տան մեր կրթական համակարգին եւ յատկանշական փարոսներ կը համարուին: Ասոնք միայն օրինակներ են. իրենց նմաններուն խիստ կարիքը ունինք: Ափսո՜ս, որ Կիպրոսի Մելքոնեանը՝ հաստատութիւն մը, որուն շրջանաւարտները ազգօգուտ աշխատանք կը տանին, իր դռները փակեց:

Մենք պէտք է ընդունինք, որ Հայաստանն է հայութեան օրրանը. հոն է հայոց պետութիւնը եւ ան պիտի ժառանգէ ինչ որ հնարաւոր է, եւ մենք բոլորս պէտք է վերախմբուինք հայրենիքին շուրջ. պէտք է կասեցուի արտագաղթը, իսկ Սփիւռքի երիտասարդը քաջալերուի հայրենիք վերադառ-նալու եւ ուժեղ հայրենիք կերտելու: Մենք կը հաւատանք մեր նոր սերունդին, անոր ներքին մարդուն, հայուն, անոր ստեղծագործ խելքին եւ ձիրքին.ահա՞ թէ ինչու մեր ապագան կը տեսնենք անոր մէջ: Սփիւռքի նոր սերունդը պէտք է Հայաստանը ժամանակակից աշխարհին հետ կապող կամուրջը ըլլայ:


## ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով

հեռաձայնել՝ (626) 398-0506






ԿԱՅԾ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՀԱՅ ՖԻԼՄԻ ՓԱՌԱՏՕՆ
Ամսուայ Առաջին եւ Երրորդ Հինգշաբթի Օրերը

*588 ԴՐԱԽՏԻ ՓՈՂՈՑ (ՄԱՅՐԻԿ 2)*

Հինգշաբթի 5 Մայիս 2016, երեկոյեան ժամը 7:30-ին
ՀԿԲՄ Կ. Սողանալեան Սրահէն Ներս
1060 N. Allan Ave., Pasadena, CA.
Մուտք՝ նուիրատուութիւն

GAIDZ Youth Organization – PRESENTS
GAIDZ Movie Night
ARMENIAN Film Festival
Every 1ST & 3RD Thursday of the Month

*588 RUE PARADIS (MAYRIG 2)*

Thursday, May 5, 2016 at 7:30 pm
AEBU Garo Soghanalian Hall, 1060 N. Allan Avenue
Pasadena, CA. Entrance Fee: DONATION

# ՀԱՅ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒ ԴԱՍԱԿԱՐԳԸ

**Հեղինակ՝ Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան**
**Գրախօսեց՝ Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան**

*Գիրքը՝ ընտիր տպագրութեամբ, 165 էջերու մէջ պատմութիւնը կը ներկայացնէ Հայ Վանականութեան, զուգորդելով զայն ակադեմական աստիճանի արժանի վարդապետներու դասակարգին հետ, որպէս վաստակ եւ Հայ Եկեղեցւոյ վարկին վայել բարձրացում: Հայր Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, գիրքիս վաստակաւոր հեղինակը, յաջողած է Վանականութեան ծագման, ձեւաւորման եւ զարգացման ուղիներով ընծայելու Հայ Առաքելական Եկեղեցւոյ սոյն բովանդակալից եւ վաւերական հատորը որպէս վերաքննեալ համադրութիւն նախկին բանասիրութենէն մեզի հասած տուեալներուն: Հեղինակը զանոնք ճարտարօրէն եւ գիտական մակարդակի վրայ վերահաստատած է մեր դասական պատմագրութեան հիմքին վրայ՝ լրիւ մատենագիտութեամբ եւ ճոխ ծանօթագրութիւններով:*

*Հատորը յայտնապէս մանրամասն ու արեւմտահայերէնի վճիտ արտայայտութեամբ կը վայելէ հայ եւ օտար աղբիւրներու անսովոր եւ հարուստ ցուցակ մը, աղբիւրներ որոնք կը վաւերացնեն նիւթին, Հայ Վանականութեան, հնագոյն շրջաններէն դէպի Միջին Դար եւ ապա 18-րդ դար երկարող բարդ եւ զգայուն ընթացքը:*

*Սոյն 2015 թուի նորագոյն հրատարակութիւնը հեղինակին անցեալի բովանդակալից այլ հատորներէն, եւ «Բազմավէպ» ամսագրի մէջ լոյս տեսած բանասիրական տարբեր յօդուածներէն ետք, այս անգամ լոյս կը տեսնէ Արեւմտեան Թեմի հրատարակչութենէն, օրհնութեամբը Առաջնորդ Գերշ. Յովնան Արքեպիսկոպոսի: Գիրքը կը բովանդակէ եօթը խիտ եւ գիրար ամբողջացնող գլուխներ, կառուցանելով հին Անապատական (վանական) դրութեան յետագայի մուտքը Հայաստան, թէ՛ իսկ քաղաքական անկայուն եւ յաճախ կործանարար ոլորտներէն անցնելով եւ դիմանալով, յանգելու համար Հայ Վանականութեան, այս անգամ Ոսկեդարու փայլքը զգեցած, հայկականացած Քրիստոնէութեամբ եւ Աստուածաշունչ Մատեանով, տողանցելով հինգէն մինչեւ տասնութերորդ դար:*

*Անտարակոյս, Հայ Վանականութիւնը անապատական դրութենէն իսկոյն բարձրացաւ վարդապետական եւ ակադեմական աստիճաններուն՝ Հայ Եկեղեցւոյ վարկը բարձրացնելով հայ պատմագրութեան հունին մէջ: Հեղինակը Հայր Տաճատ, իր իսկական վարդապետի, ուսուցչապետի լրիւ կարողութեամբ եւ հեղինակութեամբ, իր այս գիրքին մէջ քննարկած է Հայ Եկեղեցւոյ վարդապետներն ու անոնց հետզհետէ զարգացող վանական եւ ուսումնական վաստակը՝ Հայաստանի յայտնի վանք-ուսումնարաններէն ներս:*

*Վերջին եօթներորդ գլուխին մէջ հեղինակը այնքան խիտ որքան լրիւ ամփոփումը կը կատարէ երկու լեզուներով, «Վանականներու ներքին դիմագիծը» վերնագրով, ուր վանական կեանքը, հայ վարդապետները, ժամանակներու «յարափոփոխ» մտածողութիւններն ու աստուածաբանութիւնը կրցած է հոգեւոր տուեալներով եւ աւետարանական ճշգրտութեամբ, աղօթքի եւ պաշտամունքի անհրաժեշտ սահմաններուն մէջ «անփոփոխ» պահել, միշտ վաւերականն ու ճշգրիտը յայտնաբերելով:*

*Վանականութեան Հայաստան ներթափանցման այս նիւթը աւելի մանայատուկ պատմական վկայութիւններ կը հայթայթէ, վկայակոչելով հին աղբիւրներու Ասորիքի ճամբով Հայաստան մուտք գործած առաքելական նախնագոյն շարժումը՝ հարաւէն, եւ, ինչպէս հեղինակը կը ճշդէ, «ո՛չ մէկ ազդեցութեամբ Արեւմուտքէն՝ Գրիգոր Լուսաւորիչէն առաջ, ուր Ասորիքի մէջ Ասորի քարոզիչներ մեծ գործունէութիւն ցոյց տուած են, ինչպէս Յակոբ Մծբնացի եւ Դանիէլ Ասորի քարոզիչները» (էջ 55):*

*Բնական կապ մը պիտի ըլլար անշուշտ Առաքեալներու առաջին քարոզութեանց եւ յետ-Լուսաւորչեան Հայաստանի աւելի կայուն քրիստոնէութեան միջեւ: Այդ կապը Եդեսիան պիտի ըլլար, Ասորիքի մայրաքաղաքը, քան թէ Կապադովկեան Կեսարիան: Այս կէտն է որ հեղինակը յաջողած է պարզաբանել աւանդութիւնն ու յետագայի պատմագրութիւնը իրարու համեմատելով:*

*Այս կէտին վրայ կարեւոր աղբիւր մը եւս նկատի ունենալու ենք որ կը պակսի ներկայ հատորին մէջ, օտարազգի J.B. Segal-ի «Edessa The Blessed City», Oxford, 1970, անուն գիրքը, ուր համադրուած են ասորական եւ հայկական աւանդութիւնները, Եւսեբիոսի եւ Մովսէս Խորենացիի նախնագոյն տուեալներու համաձայն: Հոս եւս կը ճշդուի Ասորիքի ճամբով Հայաստան ներթափանցած Առաքելական գործունէութիւնը՝ Քրիստոսի հաւատացեալ Աբգար Ուքամմա (Սեւ) թագաւորի թղթակցութեամբ ընդմէջ իր եւ Յիսուսի (էջ 63-64):*

*Segal իր ծաւալուն այս հատորին մէջ Հայաստանի քրիստոնէութեան եւ վանականութեան հետ կապուած հարցեր կ'արծարծէ, առիթով մըն ալ Եդեսիոյ հայ Արքեպիսկոպոսը յիշելով, ուր կ'ըսէ. «Եդեսիան հայ արքեպիսկոպոսի Աթոռն էր, եւ իր մայր եկեղեցին կը կոչուէր յանուն Ս. Եփրեմ Ասորիի (Դ. դար), ուր մինչեւ վերջերս հայ եկեղեցի մը կանգուն կը մնար Ս. Եփրեմի գերեզմանին կից՝ Ուրֆայի (Եդեսիա) պարիսպէն դուրս (էջ 239):*

*Ներկայ հատորիս պատմական ընթացքը կ'ապացուցանէ ներքին կառոյց մը, թէ ինչպէս Հայաստանի մէջ վանական- ուսումնական կեանքը աստուածաբանական մտածողութեան եւ անոր յարակից գրականութեան համընթաց հոսք մը կը ցուցաբերէ՝ սկսեալ վանական նախկին եւ ապագայի վարդապետական զարգացումներով: Հոն ճշդուած են նաեւ մերօրեայ «անտեսուած եւ մոռցուած» ներհայեաց եւ զուտ հոգեւոր փորձառութիւնը: Երբ հոս աղօթքը կը պակսի, հոն աղօթքն էր ճշմարիտ ուղեցոյցը, երբ հոս առանձնութիւնը իր արժէքը կորսնցուցած է, հոն ընթերցումի եւ խոկումի հիմնական եւ անփոխա-*

Շար.ը էջ 19

# ՊԱՀՐԷՅՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ «ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՅԹՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՀԱՄԱԿԵՑՈՒԹԻՒՆ ՔԱՋԱԼԵՐՈՂ ԳԻՐՔՆ Է»




*Աւելի քան երեք հարիւր եւ ութսուն հրատարակչատուներ՝քսան տարբեր երկիրներէ ժամանած՝մաս կազմեցին Պահրէյնի Թագաւորութեան 17րդ Միջազգային Գիրքի Ցուցահանդէսին: Ցուցահանդէսը տեղի ունեցաւ Մարտ 24-Ապրիլ 3, 2016,Պահրէյնի Ազգային Թանգարանի մեծ ցուցահանդէսի սրահին մէջ՝ կազմակերպութեամբը Մշակոյթի Նախարարութեանը:*

*Աստուածաշունչի Ընկերակցութիւնը՝պաշտօնական հրաւէրովը Պահրէյնի Մշակոյթի նախարարութեան՝մաս կազմեց այս միջազգային ցուցահանդէսին: Աստուածաշունչի ընկերակցութիւնը առաջին անգամն էր որ կը մասնակցէր այս ցուցահանդէսին՝ըլլալով միակ Քրիստոնէական կազմակերպութիւնը: Աստուածաշունչի Ընկերակցութիւնը ցուցադրութեան դրած էր աւելի քան երկու հարիւր Աստուածաշունչեր եւ տարբեր լեզուներով՝ նաեւ փոքր ցուցահանդէս մը ներկայացնելով Աստուածաշունչը պատմութեան առանցքին, վեր առնելով Անոր մշակութային յատկութիւնները եւ տարբեր թարգմանութիւնները:*

*Աստուածաշունչի ընկերակցութեան մասնակցութիւնը սոյն ցուցահանդէսին ստեղծեց մեծ հետաքրքրութիւն: Տեղական մամուլը անդրադարձաւ այս իրողութեանը: Մեծ էր թիւը այցելուներուն՝որոնց հետաքրքրութիւնը եւ հարցումները կը կեդրոնանային*

Շար.ը էջ 19



## ՄԱԳՆԻՍԱԿԱՆՕՐԷՆ ԳԱՅԹԱԿՂԻՉ ԿԻՆԵՐՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Վստահ նկատած էք, որ գոյութիւն ունի կիներու այնպիսի տեսակ, որոնց համար տղամարդոց հետ յարաբերութիւնները դիւրին են: Ի՞նչ է անոնց գաղտնիքը:

1. Մագնիսական կիներ միշտ դրական են: Իսկ դրական տրամադրուածութիւնը ընտրութիւն է, որոնք ամէն օր կ'ընեն: Այո, երբեմն կ'ըլլայ ուժերու անկում, տրամադրութեան բացակայութիւն եւ իրական ճնշուածութիւն, բայց ընդհանուր առմամբ այսպիսի կիներ կը հաւատան, որ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ:

2. Անոնք պատասխանատուութիւն կը վերցնեն: Աւելի դիւրին է մնալ դրական եւ երջանիկ, երբ ամէն ինչ ձեր վերահսկողութեան տակ է, երբ դուք էք պատասխանատու ձեր կեանքին համար: Երբ կը փնտռէք, թէ որուն մեղադրել ձեր ձախողութիւններուն համար, ապա բացասական լիցքեր կը հաղորդէք, որ ուրիշները կը վերցնեն իրենց վրայ:

3. Անոնք կ'աշխատին երջանիկ ըլլալ: Մագնիսական կինը պարզապէս չի խաբեր եւ չի համոզեր, որ ամէն ինչ լաւ է: Ան ամէն ինչ կ'ընէ, որպէսզի այդպէս ալ ըլլայ: Սակայն պէտք է ըսել, որ շատ բան կախեալ է աշխարհի հանդէպ մօտեցումէն եւ հայեացքէն:

4. Անոնք ուրիշներու մէջ լաւը կը տեսնեն: Յարաբերութիւնները աւելի բարդ կ'ըլլան, երբ անընդհատ կը փորձէք որեւէ վատ բան գտնել, բացայայտել նենգ մտադրութիւնները: Եթէ դուք համոզուած էք, որ ձեզի համար լաւ պիտի չըլլայ, այդպէս ալ կ'ըլլայ: Նոյնիսկ, եթէ որեւէ վատ բան տեղի կ'ունենայ, ցանկալի կինը չի սկսիր մէկ անգամէն մեղաւորներ փնտռել, չի մտածեր, որ վատ բանը յատուկ եղած է, այլ կը փնտռէ տեղի ունեցածի իրական պատճառները:

5. Անոնց համար անձի զարգացումը եւ նպատակները կարեւոր են: Երբեմն անոնք կը նեղուին, որ պէտք է զոհաբերել իրենց երազանքները յարաբերութիւններու եւ ընտանիքի համար: Սակայն ատիկա հեռու է իրականութենէ: Պէտք է գտնել այնպիսի յարաբերութիւններ, որոնք ձեր երազանքներուն կը համապատասխանեն եւ այնպիսի մարդ, որ կ'աջակցի ձեզի՝ ձեր նպատակներուն ձգտելու ընթացքին:

6. Անոնք կը հետեւին իրենք իրենց՝ պարզապէս իրենք իրենց համար: Հաւանաբար ատիկա ճիշդ չէ, սակայն մինչեւ դուք ձեզ վստահ չզգաք ձեր մարմնին մէջ, մինչեւ դուք չսիրէք զայն, դուք ցանկալի չէք ըլլար: Եւ որքան ալ ուզէք նայիլ իրականութեան աչքերուն, աւելի լաւ է դուք ձեզ կարգի բերել եւ ճիշդ ըլլալ: Ատիկա չի նշանակեր, որ դուք պէտք է model-ներու նման կատարեալ ըլլաք, ուղղակի հարկ է փորձել ձեր հնարաւորութիւններու սահմաններուն մէջ լաւ խնամուած ըլլալ:

## ԻՆՉՊԷՍ ԻՏԷԱԼԱԿԱՆ ԴԱՌՆԱԼ ՁԵՐ ԻՍԿ ՏՂԱՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ

Խնամուած աղջիկը ենթադրաբար աւելի յաջողակ է յարաբերութիւններ կառուցելու ընթացքին, այդ պատճառով ձեր տղամարդու համար իտէալական դառնալու ուղղութեամբ առաջին քայլը սեփական կերպարին վրայ աշխատիլն է: Ատիկա բոլորովին չի նշանակեր, թէ անհրաժեշտ է թոներով դիմայարդարում ընել եւ դուրս չգալ գեղեցկութեան սրահներէն:

Իտէալական աղջիկը իր տղամարդէն քիչ մը աւելի յիմար է: Ըստ փիլիսոփաներու՝ իմաստուն կինը յիմար կինն է: Ինչ ալ ըլլայ, յարգեցէք ձեր տղամարդը: Ճիշդ չէ ուղղակիօրէն մատնանշել անոր թերութիւնները, մանաւանդ՝ զանոնք քննարկել ընկերուհիներու հետ: Ան քու ընտրութիւնդ է եւ դուն պէտք է գնահատես զինք եւ առիթ չտաս կասկածելու զգացումներուդ:

«Սղոց» մի ըլլար: Տղամարդոց մեծամասնութիւնը՝ աշխատանքէն հազիւ տուն վերադառնալ՝ գրեթէ ամէն օր կը լսէ նոյն խօսքերը, որ քիչ դրամ կը շահի, որ գուլպաները դարձեալ այս ու այն կողմ նետած է, որ դարձեալ անոր բջիջայինի զանգը միացած է ու ընդհանրապէս այդ հագուստով յիմարի տեսք ունի: Ուստի, անոր համար յարմար հագուստ ընտրէ: Սենեակին մէջ զամբիւղի նման բան մը դիր, որպէսզի գուլպաները այնտեղ նետէ, եւ այլն: Նկատի ունեցիր, որ ընկերդ/ամուսինդ նոյնպէս հիացած չէ քու բոլոր ըրածներովդ, բայց ան իր պահանջները միշտ չէ որ կը բարձրաձայնէ:

Սկզբունքօրէն տղամարդու համար իտէալական աղջկայ ամբողջ ցուցակը կրնայ ձեւակերպուիլ երեք բառով. գեղեցիկ է, ճաշ կ'եփէ, կը լռէ:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՔՈԼԵՍԹԵՐՈԼԸ ՆՈՒԱԶԵՑՆՈՂ ՈՒՏԵԼԻՔՆԵՐ

Ներկայիս մեր սննդականոնը եւ քիչ շարժիլը յաճախ կը պատճառեն արեան մէջ վատ քոլեսթեոլի բարձրացում: Ստորեւ տեսնել կարգ մը ուտելիքներ, որոնք կը նուազեցնեն քոլեսթերոլը:

1-Սոյան կրնայ փոխարինել միսը եւ դրական ազդեցութիւն կ'ունենայ մեր վրայ:

2-Ընկոյզի, նուշի եւ այլ հատեղէններու օգտագործումը դրական ազդեցութիւն ունի նաեւ մեր առողջութեան վրայ:

3-Վարսակի-oats եւ գարիի-barley օգտագործումը մեր սննդականոնին մէջ կարեւոր է: Այս մէկը կարելի է ստանալ հացէն եւ այլ պեթակլուքան կոչուող նիւթէ մը:

4-Պտուղի եւ բանջարեղէնի սպառումը կ'օգնէ նաեւ քոլեսթեոլի նուազումին: Մանաւանդ անոյշ գետնախնձորը, սմբուկը, խնձորը, պրոքքոլին, օքրան, ելակը եւ սալորը լաւ արդիւնք տուող բանջարեղէններ ու պտուղներ են:

5-Խուսափիլ յագեցած ձէթերէն-unsaturated fats: Այսինք հնդընկոյզի եւ արմաւենիի ձէթերը օգտակար չեն: Օգտագործել չյագեցած ձէթ, ինչպէս ձիթապտուղի, արեւածաղիկի, եգիպտացորենի ձէթ: Սպառել նաեւ աւոքատօ, խղոտ ձուկ:

## ՀՐԱԺԱՐԵՑԷՔ ՁԵԶ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ՏԱՆՈՂ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Մեր սովորութիւնները կ'ազդեն ֆիզիքական եւ զգացմունքային վիճակին վրայ եւ, փաստօրէն, կը ծրագրաւորեն մեր վարուելակերպը ու կը նախանշեն կեանքը: Անոնց մէջ կան այնպիսիները, որոնցմէ կ'արժէ հրաժարիլ:

1. Դուք ձեզ խղճալու սովորութիւն: Աղքատութիւնը կը սկսի երբ դուք ձեզի անընդհատ կը խղճաք եւ կու լաք՝ անյաջող դասաւորուած բախտի համար: Կազմուածքը լաւ չէ, եկամուտը քիչ է, բնակարանը լաւ չէ... Ամէն ինչ կրնայ առիթ ըլլալ բողոքելու համար: Ատոր հետ մէկտեղ մարդիկ, որոնք մշտապէս կը խղճան իրենք իրենց, կը սկսին կորսնցնել շրջապատին կարեկցութիւնը: Այսպիսի մարդուն կարելի է անսպառ խղճալ, սակայն ան ինքն ալ պէտք է բան մը ընէ: Այսպիսի մարդոցմէ կը խուսափին, ոչինչ կը սպասեն անկէ եւ այլեւս չեն կանչեր հանդիպումներու, իբրեւ արդիւնք՝ ան կ'ունենայ քիչ կապեր, առանց որոնց դժուար է աշխատանք գտնել: Խղճալը կը տանի ցած վարձատրուող աշխատանքի եւ միջակ գոյատեւման:

2. Ամէն բանի համար խնայել: Եթէ խանութին մէջ դուք կը փնտռէք զեղչերով բաժինը, եթէ կը կարծէք, որ ձեր գործընկերները ձեզմէ շատ կը վարձատրեն, եթէ ոչ մէկուն պարտքով գումար կու տաք եւ կը կարծէք, որ ձեր աշխատավարձով երեխայ չէն ունենար, ամենայն հաւանականութեամբ, աղքատութեան սովորութիւնները արդէն ձեր մէջ են:

Վերլուծաբաններուն համաձայն՝ լայնածաւալ խնայողութիւնը խելամտութիւն չէ, ատիկա կը նշանակէ, որ մարդը չունի եկամուտներու եւ ծախսերու հաշուեկշիռ: Ունեւոր մարդը պատրաստ է իրերու համար վճարել անոնց իրական գումարը, բացի այդ՝ ան պատրաստ է վճարել ուրիշի աշխատանքին համար եւ նոյնը կ'ակնկալէ ուրիշներէն:

3. Ամէն ինչ դրամով գնահատել: Աղքատութեան ծրագրուածները կը կարծեն, որ միայն շատ դրամ ունենալով կարելի է երջանիկ ըլլալ, որ կեանքով ուրախանալ չըլլար, եթէ չկայ արժէքաւոր հագուստ, մեծ տուն, գեղեցիկ ինքնաշարժ: Ընկերաբաններու կարծիքով՝ »Ձեզի ի՞նչ պէտք է երջանկութեան համար« հարցին պատասխանելով՝ աղքատները կը սկսին նիւթական իրեր թուարկել, մեծ եկամուտով մարդիկ կ'ըսեն՝ սէր եւ ընկերութիւն:

4. Խուճապ, երբ կը վերջանայ դրամը: Երբ կը կասկածիք, որ ձեզ կրնան աշխատանքէ հեռացնել, իսկ եթէ այդ միտքը արդէն կ'արագացնէ ձեր զարկերակին աշխատանքը, կը նշանակէ, որ դուք ծրագրաւորուած էք աղքատութեան: Հարուստ մարդոց համար դրամը անվերջ չէ, բայց անոնք գիտեն, որ օր մը կրնան ունենալ, իսկ օր մը՝ ոչ:

5. Ծախսել աւելին, քան կը շահիք: Դուք կ'աշխատիք երկու տեղ, սակայն գումարը չի բաւեր: Ժամանակն է բան մը փոխելու: Եթէ մարդը չի հասկնար, թէ մէկ վարկը ինչով կը տարբերի միւսէն, ուստի ան, ի հարկէ, հարուստ չի դառնար:

6. Չսիրած գործով զբաղելու սովորութիւն: Հոգեբանները կ'ըսեն, որ մարդիկ, որոնք կը զբաղին չսիրած գործով, պատրաստ են անյաջողութիւններու եւ աղքատութեան: Ատոր պատճառը իրենց համար տհաճ գործով զբաղելու անհրաժեշտութիւնն է: Որպէսզի վերացնեն այդ սովորութիւնը պէտք է ընել ոչ թէ այն ինչ պէտք է ուեւէ մէկուն, այլ այն, ինչ բաւարարութեան զգացում կը յառաջացնէ:

7. Բարեկամներէն հեռու մնալու սովորութիւն: Բոլոր հարուստներուն համար ընտանիքը ամենապահպանուող արժէքն է: Միայն այնտեղ կարելի է գտնել սփոփանք եւ աջակցութիւն, երբ կեանքի մնացած ոլորտներուն մէջ ճգնաժամ է:

## ՈՒՇ ՄԱՅՐԱՆԱԼՈՒ 5 ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Դուք յաջողակ կին էք, որ կեանքի մէջ հասած էք շատ բանի: Ձեր կարծիքը հաշուի կ'առնեն բոլորը, ձեզ կը յարգեն գործընկերները եւ ընկերները: Արդէն 30 տարեկանին դուք կրցած էք ստեղծել նիւթական ապահովութիւն: Իսկ ինչ է հաւանականութիւնը լոյս աշխարհ բերելու առողջ երեխայ 30-էն ետք: Ինչպիսի՞ վտանգներ կը վերցնէ իր վրայ կինը: Հակառակ անոր, որ հասարակութիւնը վերջին տասնամեակներուն աւելի հանգիստ կը վերաբերի ուշ ծննդաբերութեան, մինչեւ այժմ ատոր համար լաւագոյն տարիքը կը համարուի 20-30-ը:

Հնարաւոր վտանգները եւ բարդութիւնները կը վախցնեն կիները, որոնք կը ծրագրեն ուշ յղութիւն, սակայն կան նաեւ շարք մը դրական կողմեր:

1. Զգացմունքային եւ հոգեբանական պատրաստուածութիւն: 30-էն ետք, մեծ մասամբ մարդիկ կարելի է անուանել հասուն, կազմուած անձնաւորութիւններ: Դուք կրնաք կարգաւորել ձեր զգացումները, գիտէք ինչ է դժուարութիւնը եւ կրնաք զայն յաղթահարել: Գիտակցուած մայրութիւնը հսկայ առաւելութիւն կու տայ է'ւ մայրիկին, է'ւ ապագայ երեխային:

2. Նիւթական կայունութիւն: Շատ յաճախ 30-ի մօտ զոյգերը արդէն ունին կայուն աշխատանք եւ կացարան, այդ պատճառով ապագայ ծնողները կարիք չեն ունենար չեղելու նիւթական խնդիրներու վրայ եւ ամբողջութեամբ կը կեդրոնանան ընտանիքի նոր անդամի յայտնուելուն վրայ:

3. Օգուտ առողջութեան համար: Էսդրոկենները, որոնք յղութեան ժամանակ կ'աշխուժանան, կ'ամրացնեն ոսկորները եւ կը նուազեցնեն հիպերտոնիայի վտանգը, կը բարելաւեն կնոջ արտաքին տեսքը, կը մեծնայ սեռական աշխուժութիւնը:

4. Երկրորդ շնչառութիւն: Ուշ յղութիւնը եւ երեխային յայտնուիլը կնոջ կը պարգեւեն երկրորդ երիտասարդութիւն, նոր շրջապատ:

5. Պատասխանատուութիւն. Ուշ յղութիւնը ցանկալի, գիտակցուած եւ երբեմն երկար սպասուած քայլ է: Ապագայ մայրիկները աւելի լուրջ կը վերաբերին յղութեան: Նաեւ, այս տարիքին կիներ կ'ունենան կայուն յարաբերութիւններ եւ անոնց կողքի տղամարդը կեանքի այս շրջանին նոյն պատասխանատուութեամբ կը մօտենայ եւ կը կիսէ բոլոր դժուարութիւններն ու լաւ պահերը:

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՊԱՍՏԱՌՆԵՐ ԱՐԺԵՆԹԻՆԱԿԱՆ ՍՈՒՊԵՐԿԼԱՍԻԿՈՅՈՒՄ




*Արժենթինական սուպերկլասիկոն «Բոկա Խունիորսի» եւ «Ռիվեր Փլեյթի» միջեւ Պուէնոս Այրեսում սկսուել է լեգենդար «Լա Բոմբոներա» ստադիոնի խաղադաշտ Հայոց ցեղասպանութեան 101-րդ տարելիցին նուիրուած պաստառներ դուրս բերելով:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԻ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ



*Մոնղոլիայում աւարտուած ազատ ոճի ըմբշամարտի օլիմպիական վարկանիշային մրցաշարում Հայաստանի հաւաքականի Նորեկ Գէորգի Կետոեւը նուաճել է ոսկէ մետալ: Ռիօ-2016-ի ուղեգիր ապահոված Կետոեւը եզրափակիչում 4:3 հաշուով յաղթել է ուզբեկ Մագոմեդ Իբրագիմովին:*

*Յիշեցնենք, որ յունահռոմէական ըմբշամարտի Հայաստանի հաւաքականից Մոնղոլիայում օլիմպիական ուղեգրեր են նուաճել 75 կգ քաշային Արսէն Ջուլֆալակեանը եւ 85 կգ քաշային Մաքսիմ Մանուկեանը:*

*Յաջորդ օլիմպիական վարկանիշային մրցաշարը տեղի կ՚ունենայ Մայիսի 6-8-ը Ստամբուլում:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ՅԱՂԹԵԼ Է ԹՈՒՐՔԵՐԻՆ ԵՒ ՆՈՒԱՃԵԼ ՊՐՈՆԶԷ ՄԵՏԱԼ



*Նետաձգութեան տղամարդկանց Հայաստանի հաւաքականը երրորդ տեղն է զբաղեցրել Սոֆիայում կայացած Եւրոպայի Մեծ մրցանակի առաջին փուլում, յայտնում է archeryeurope.org-ը:*

*Հայկական թիմը 3-4-րդ տեղերի համար պայքարում յաղթել է Թուրքիայի մարզիկներին եւ նուաճել պրոնզէ մետալ: Հայաստանի հաւաքականի կազմում են՝ Վասիլ Շահնազարեանը, Գէորգ Հազարումեանը եւ Արամայիս Ապրեսեանը:*

*Նունէ Վասիլեանը 63 մարզուհիների պայքարում զբաղեցրել է 17-րդ տեղը:*

## «ԼԵՍԹԵՐԻ» ՏՊԱՒՈՐԻՉ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԵՒ 8 ՄԻԱՒՈՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆԸ «ՏՈՏԵՆՀԵՄԻ» ՆԿԱՏՄԱՄԲ



*Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան 35-րդ տուրում առաջատար «Լեսթերն» ընդունեց «Սուոնսիին» եւ առանց լուրջ խնդիրների հասաւ յաղթանակի նաեւ առանց առաջատար ռմբարկու Ջէյմի Վարդիի, որը երկու խաղով որակազրկուած է եւ հանդիպման ընթացքին հետեւում էր տրիբունայից: Կլաուդիօ Ռանյերիի գլխաւորած թիմն առաւելութեան հասաւ 4:0 հաշուով: Հաշիւը բացեց Ռիյադ Մահրեզը, յետոյ դուբլի հեղինակ դարձաւ Լեոնարդօ Ուլոան: Վերջնամասում էլ փոխարինման դուրս գալուց երեք րոպէ անց աչքի ընկաւ Մարկ Օլբրայտոնը:*

*«Լեսթերը» մրցաշարային աղիւսակը գլխաւորում է 76 միաւորով եւ 8 միաւորի ընթացիկ առաւելութիւն ունի Լոնտոնի «Տոտենհեմի» նկատմամբ:*

*Եթէ «Լեսթեր Սիթին» նուաճի ֆուտպոլի Անգլիայի ախոյեանի տիտղոսը, միայն Մեծ Բրիտանիայի հինգ առաջատար բուքմէյքերական գրասենեակներում շահող խաղադրոյքների գումարը կը հասնի 14 միլիոն տոլարի, գրում է BBC-ն:*

*Մրցաշրջանի մեկնարկից առաջ «Լեսթերի» ախոյեանութեան գործակիցը եղել է 5001,0: Ամանորին գործակիցն իջել է մինչեւ 1001,0: Նախորդ երկու ամիսներին «Լեսթերի» ախոյեանութեան գործակիցն ամենացածրն է՝ 1,5:*

*Եթէ «Լեսթերը» նուաճի տիտղոսը, բուքմէյքերները կը կրեն հսկայական ֆինանսական կորուստներ:*

*Առաջնութեան աւարտից չորս տուր առաջ Կլաուդիօ Ռանյերիի գլխաւորած թիմը 73 միաւորով առաջին տեղում է եւ 5 միաւորի առաւելութիւն ունի «Տոտենհեմի» նկատմամբ:*

## ԵԱ-2016. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՒԹԵԱՆԸ ՅԱՂԹԵՑ ԹՈՒՐՔ ՄՐՑԱԿՑԻՆ ԵՒ ՆՈՒԱՃԵՑ ՊՐՈՆԶԷ ՄԵՏԱԼ



*Թաթարստանի մայրաքաղաք Կազանում մեկնարկած ջիւդոյի Եւրոպայի առաջնութեան առաջին օրը Հայաստանը նուաճեց մէկ պրոնզէ մետալ: 60 կգ քաշային կարգում Յովհաննէս Դաւթեանը երրորդ տեղի համար գօտեմարտում պարտութեան մատնեց թուրք Բեքիր Օզլուին, որը առաջին շրջանում դուրս էր թողել այս քաշային կարգում Հայաստանի միւս ներկայացուցիչ Գարիկ Յարութիւնեանին:*

*66 կգ քաշային Ֆերդինանդ Կարապետեանը մեկնարկային գօտեմարտում յաղթեց ատրպէյճանցի Թարլան Քարիմովին, սակայն յաջորդ գօտեմարտում պարտութիւն կրեց եւ դուրս մնաց պայքարից: Այս քաշային կարգում պրոնզէ մետալի արժանացաւ ռուսաստանցի Արսէն Գալստեանը:*

*Կանանց 52 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացնող Ժաննա Ստանկեւիչը պարտուեց մեկնարկային գօտեմարտում:*

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ԱՐԵՒՄՏԵԱՆ
ԹԵՄԻ «ԶՈՒԱՐԹՆՈՑ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԵՒ
ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ԹԵՄԻՍ
ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴ՝
ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ



ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԽՆԴԻՐԸ ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ»
ԴԱՍԱԽՕՍ՝ ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ՅԱԿՈԲ ԿԻՒԼԻՒՃԵԱՆ
ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 3-ԻՆ, 2016
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:30-ԻՆ
Առաջնորդարանի «Արմէն Համբար» սրահին մէջ
(3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504)
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
Գեղարուեստական Բաժին - Սուրճի հիւրասիրութիւն

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
Երբ խոչընդոտներու կը հանդիպիս, զանոնք դիմագրաւելու ատեն կը մոռնաս շիտակ բանը ընել այլ՝ կ՛ընտրես դիւրին միջոցը անոնցմէ դուրս ելլելու: Գործակիցներուդ հետ յարգանքով վարուէ եւ իւրաքանչիւրին յատուկ արժէք տուր:
Բախտաւոր թիւերդ են: 10,14,21,32,33

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Գործի ծրագիր մը խորապէս ներշնչած է քեզ եւ խորհրդածութեան համար մէկը կը փնտռես: Որոշումներդ կրնան ծառայել որպէս մղիչ ուժ զաւակներուդ ուսուցման համար: Յանձնարարելի է որ առանձին մնաս քիչ մը դուն քեզ հաւաքելու համար:
Բախտաւոր թիւերդ են: 3,7,13,24,25

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20
Անհամբեր եւ խանդավառ կը սպասես մէկու մը այցելութեան: Երբեմն որոշումներդ միայն կարճ ժամանակի մը համար կը գործադրես, ապա կը մոռնաս զանոնք: Փորձէ ընթացքդ բարեփոխել եւ խօսքիդ վրայ հաստատ մնալ:
Բախտաւոր թիւերդ են: 1,9,14,17,20

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22
Ազգականներուդ հետ հաղորդակցութիւնդ ամրացնելու ես: Լաւ կ՛ըլլայ որ երբեմն անձնաքննութիւն կատարես եւ դիմագրաւես տկարութիւններդ: Առօրեայ սովորութիւններդ մոռնալու միակ ձեւը նոր հետաքրքրութիւններով զբաղիլն է:
Բախտաւոր թիւերդ են: 2,11,24,31,35

**ԱՌԻԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Շատ արդար եւ հաւատարիմ անձ մըն ես եւ գէշութիւններէ միշտ հեռու կը մնաս: Հակառակ ծանրաբեռնուած գործերուդ, երբեք չես գանգատիր: Բժշկական այցելութիւն մը կարեւոր պիտի ըլլայ գալիք օրերուն:
Բախտաւոր թիւերդ են: 2,6,19,20,30

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
Վերջերս առանձնութիւնը շատ կը նախընտրես եւ կարծես թէ սկսած ես մոռնալ թէ բարեկամներդ քեզ շատ կը սիրեն: Գործդ սկսած ես շատ խոնարհութեամբ, սակայն հետզհետէ սկսած ես պաշտօնդ նկատել բան մը որ միայն քեզի կը պատկանի:
Բախտաւոր թիւերդ են: 9,14,22,25,33

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Արժէքաւոր առարկայ մը կորսնցուցած ես որու համար շատ կը նեղանաս: Մի մոռնար որ անպայման պիտի գտնես զայն: Երբ հարցը գործիդ կը վերաբերի, շատ ճշդապահ ես եւ ճշգրտութեամբ կը հետեւիս մանրամասնութիւններուն:
Բախտաւոր թիւերդ են: 10,12,25,33,35

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
Երբ իրագործումներդ նկատի կ՛առնես, ծուլութեան երբեք չես հանդուրժեր եւ կ՛ուզես պաշտօնիդ գագաթը հասնիլ: Տանդ յարկէն ներս անկարգութիւն եւ տակնուվրայութիւն մը ստեղծուած է, պէտք է սկսիս մաքրութեան գործի:
Բախտաւոր թիւերդ են: 4,19,25,29,33

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Եթէ ծրագիրներդ ամբողջացնելու փափաքը չ՛ունիս՝ ոչինչ կարելի պիտի ըլլայ գլուխ հանել: Ամէն առիթները օգտագործէ զաւակներուդ սորվեցնելով կեանքի իրականութիւնները: Մեծ խումբով պտոյտ մը պիտի կազմակերպես:
Բախտաւոր թիւերդ են: 3,13,25,33,35

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
Փառասիրութիւնը քեզ շատ շահագրգռած է, սակայն լաւ գիտցիր թէ հոն կան մութ կողմեր եւ կրնայ ըլլալ որ ստիպողական՝ սխալ քայլեր առնես: Եթէ կ՛ուզես բարձր դիրքի հասնիլ, խոնարհ եւ համեստ եղիր: Նեղութիւններուդ յաղթահարէ ժպիտով:
Բախտաւոր թիւերդ են: 1,5,14,23,34

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18
Կեդրոնացումդ միայն մէկ բանի վրայ դիր որպէսզի չտուժես: Ապրելակերպդ անպայման պէտք է բարելաւես եւ բաւական է միշտ բարձրացնես ուրիշները: Յատուկ հանդիպումներ նշանակէ քեզմէ հեռու մնացած բարեկամներու հետ:
Բախտաւոր թիւերդ են: 4,14,25,26,30

**ՁՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20
Շատ պարտականութիւններ ունիս ընտանիքիդ ճիշդ ձեւով առաջնորդելու: Դուն քու անձդ բարձրացնելով՝ կը վնասես նկարագրիդ եւ հանրութեան դէմ կեցուածքիդ: Մէկդի դիր անկարեւոր զբաղմունքները եւ պարապէ լաւ գիտելիքներով:
Բախտաւոր թիւերդ են: 7,13,17,28,32

## Ի՞ՆՉ ԸՆԵԼ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ ՅԱՅՏՆՈՒԵԼՈՒ ՊԱՀՈՒՆ

*Մեծ իմաստութիւն եւ կեանքի փորձ ունեցող Գաբրիէլ Կարսիա Մարգեսի 15 ոսկէ խորհուրդները, որոնք կ՚օգնեն դժուար իրավիճակներու մէջ յայտնուելու պահուն:*

*1. Պէտք է հետեւիլ երեխայի ձայնին, որ եղած է ու կայ մարդու հոգիին մէջ: Եթէ մենք կը լսենք մեր մէջ առկայ մանուկին, մեր աչքերը կրկին կը փայլին: Եթէ մենք չենք խզեր այս կապը, ուրեմն չենք ալ կորսնցներ կեանքի հետ ունեցած մեր կապը:*

*2. Հանգստացիր: Մեռնիլը աւելի դժուար է, քան կը թուի:*

*3. Կեանքը շարունակելու միակ միջոցը՝ թոյլ չտալ յիշողութիւններուն կրծել ու ոչնչացնել քեզ:*

*4. Հասարակական կեանքի գլխաւոր սկզբունքը՝ կարենալ կառավարել վախը, իսկ ամուսիններու կեանքին մէջ կարեւոր է կարենալ վերահսկել ձանձրոյթը:*

*5. Էական նշանակութիւն չունի, որ դուն չես հաւատար դուն քեզի: Կարեւորը, որ Աստուած կը հաւատայ քեզի:*

*6. Ես գլխարկ չեմ դներ, որպէսզի ոչ մէկուն առջեւ հանեմ զայն:*

*7. Ոչ մէկ խենթ խելագար է, եթէ լսես անոր փաստարկները:*

*8. Եթէ որեւէ գործի մէջ ներգրաւուած է կին մը, վստահ եմ, որ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ: Ցաւակ է, որ կիներ կը կառավարեն աշխարհը:*

*9. Մեծ աղէտները մեծ առատութիւն կը բերեն: Անոնք կը ստիպեն մարդոց ապրելու ցանկութիւն ունենալ:*

*10. Երբեք շատ ուշ չէ:*

*11. Աւելի լաւ է ուշ գալ, քան հրաւիրատոմսերու սպասել:*

*12. Հաշտեցման վայրկեանը աւելին կ՚արժէ, քան մտերիմ ընկերութիւնը:*

*13. Եթէ հանդիպիք ձեր իսկական սիրոյն, գիտցէք, որ ան ոչ մէկ տեղ կը փախչի՝ ոչ մէկ շաբաթ, ոչ մէկ ամիս, ոչ ալ մէկ տարի ետք:*

*14. Թոյլ մի տար քեզ մահանալ՝ առանց զգալու սիրելիիդ կողքին քնանալու հրաշքը:*

*15. Ժպտացէք, որ վիշտին հաճոյք չպարգեւէք:*

## ՄԻՐԳԵՐՈՒ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄՈՐԹԻՆ ՎՐԱՅ

*Դիմակները արագ ազդող դիմայարդարման միջոցներ են, որոնք կը սնուցանեն, կը մաքրեն եւ կը նրբացնեն մորթը: Ճիշդ պատրաստուած եւ կիրարկուած դիմակները կը բարելաւեն սնուցումը եւ արեան շրջանառութիւնը, կը կարգաւորեն հիւսկէններուն մէջ ճարպային, սպիտակուցային, ածխաջուրերու եւ հանքանիւթերու փոխանակութիւնը:*

*Դիմակներու ազդեցութիւնը ի յայտ կու գայ մէկ անգամէն, որ էական է, օրինակ, երբ ձեր տեսքը պէտք է շտապ կարգի բերել: Կանխարգիլման նպատակով դիմակները յարմար է օգտագործել շաբաթը երկու անգամ:*

*Առաւել տարածուած են միրգերէ եւ բանջարեղէններէ դիմակները: Այս հրաշալի միջոցներու սիրահարներուն համար օգտակար է գիտնալ, թէ որ բնական միջոցը, ինչ դրական ազդեցութիւն ունի:*

*-Ծիրանը կը հանգստացնէ եւ կը վերացնէ գրգռուածութիւնը,*

*-Սմբուկն ու դդումը կը խոնացնեն չոր եւ բորբոքած մորթը,*

*-Պանանը մորթը կը խոնացնէ, կը հարթեցնէ եւ կը փափուկցնէ,*

*-Լոռամիրգը եւ հապալասը կը նեղցնեն ծակտիկները եւ բուժիչ ազդեցութիւն ունին,*

*-Խաղողը կը խոնացնէ, կը սնուցանէ եւ կը փափուկցնէ,*

*-Պալը կ՚առոյգացնէ եւ կը նեղցնէ ծակտիկները,*

*-Գետնախնձորը կազդուրիչ ազդեցութիւն ունի կնճռոտ մորթին վրայ,*

*-Ելակը եւ ազնուամորին կը խոնացնեն եւ կ՚ապաքինեն,*

*-Կիտրոնը, թուրինջը, նարինջը եւ մանտարինը հրաշալի կերպով կը նեղցնեն ծակտիկները, սակայն ատոնց հիւթերը պէտք է խառնել այլ հիւթերով՝ առաջիններու չափէն աւելի ներգործութիւնը մեղմելու համար,*

*-Վարունգը ունի սպիտակցնող ազդեցութիւն,*

*-Դեղձը կը հարթեցնէ եւ կը փափուկցնէ,*

*-Լոլիկը կը սնուցանէ յոգնած մորթը,*

*-Խնձորը հրաշալի կերպով կը խոնացնէ:*

*Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.*


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**

*** $50,00 * $100,00 (first class) for USA**
**$ 125,00 (Air Mail) for Canada.**
**$ 250,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------------
**Address:** ---------------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** -------------
**Tel :**---------------------- **Email:** -------------------------

## ԱՐՑԱԽԵԱՆ ՉՈՐՍՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄ

*Շարունակուածէջ 13–էն*

*շեշտէր, որ Արցախի հարցը պէտք է լուծուի բացառապէս խաղաղ ճանապարհներով եւ փոխզիջման ըմբռնումներով:*

*Գետնի վրայ մինչ երկու հակամարտող կողմերը զինուորական համալրումներ կ’ընեն, մասնաւորապէս հայկական կողմին համար հարցը տեղափոխուած է ներքին քննարկման հարթակ: Այս իրականութեան ամէնէն վառ ապացոյցը անցեալ շաբաթ 9 Ապրիլի յետմիջօրէին ՀՀ գործող եւ նախկին առաջին նախագահներուն՝ Սերժ Սարգսեանի եւ Լեւոն Տէր Պետրոսեանի վերջինիս բնակարանին մէջ տեղի ունեցած հանդիպումն էր, որ մեծ ուշադրութեան կ’արժանանար: Մինչ ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեան կը յայտնէր, որ այս փուլին անհրաժեշտութիւն չի տեսներ Սերժ Սարգսեանին հանդիպելու, անդին Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահը «Ի Լուր» ելեկտրոնային կայքին հարցազրոյց մը տալով կը խօսէր այդ «պատմական» հանդիպման մանրամասնութիւններուն մասին: Տէր Պետրոսեան փակագիծերը բանալով կը յայտնէր, թէ առաջին անգամը չէ, որ Հայաստանի համար ճակատագրական պահերուն ինք պատրաստ է խօսիլ իրեն համար թիւ մէկ քաղաքական «հակառակորդ» համարուող երկրի նախագահին հետ: Բացի այս իրականութենէն, նաեւ պէտք է շեշտադրել Տէր Պետրոսեանի այն մօտեցումը ըստ որուն, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը իր թիկունքը «ապահովուած» պէտք է զգայ որեւէ բանակցութեան սեղանի առջեւ: Ուրե՞մն: Ուրեմն բացայայտ է, որ ղարաբաղեան խնդրի յառաջիկայ փուլը պիտի դրուի բանակցութիւններու սեղանի մը, որուն հիմնական հովանաւորը պիտի ըլլայ Մոսկուան: Բացորոշ է նաեւ, որ հրադադարը հաստատելու Մոսկուայի յաջողութեան մէջ պէտք է տեղադրել Գրեմլի Կովկասին միակ տէրը ըլլալու փաստը եւ այս համարձակ քայլով Վլատիմիր Փութին բոլոր խաղացողներուն կ’ըսէր, որ իրենց համար Կովկասը անսակարկելի տարածք է:*

*Մոսկուայի դերին մագլցումին մասին խօսած է ԵԱՀԿ-ի Մինսքեան խումբի նախկին համանախագահ Մէթիու Պրայզան: Ամերիկացի համանախագահը բացի անկէ, որ կարեւորած է Մոսկուայի դերը ղարաբաղեան հիմնախնդրի վերջին զարգացումներուն դիմաց, նաեւ ծանր մեղադրանքներ ուղղած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու ընդհանուր կեցուածքին ու որդեգրած անգործնական եւ կրաւորական դիրքին առնթեր:*

*Այս մօտեցումին մէջ պէտք է կարդալ, որ Կովկասը կարեւոր շրջան է նաեւ Ուաշինկթընին համար, որուն այսօրուան վարչակարգը տարբեր բարդ հարցերու մէջ մխրճուած ըլլալու պատճառով կարելի է ըսել, որ երես թեքած է խնդիրէն:*

*ԱՄՆ-ի ղեկավարութեան կարեւորագոյն յայտարարութիւնը ղարաբաղեան զարգացումներուն վերաբերեալ կ’ըլլար Արտաքին Գործոց Նախարարի մակարդակով: Ճոն Քէրի հարցը կը քննարկէր իր ռուս պաշտօնակիցին հետ եւ անոր յայտարարութիւնները կ’ըլլային հարցը բացառապէս խաղաղ ճանապարհով լուծելու մասին:*

*Վերադառնալով Երեւանի մէջ տեղի ունեցող խմորումներուն, պէտք է նաեւ նկատի առնել «Ժամ» ելեկտրոնային պարբերականին մէջ լոյս տեսած «Սենսացիոն լուրեր Մոսկուայից» վերլուծական նիւթը, ըստ որուն Ռուսիոյ ղեկավարութիւնը այսօր դժգոհ է ՀՀ նախագահէն եւ այդ դժգոհութիւնը կապուած է Սարգսեանի իբրեւ Կովկասի մէջ Ռուսիոյ շահերը հարուածելու եւ ծանրագոյն այս հանգրուանին թոյլ տուած մեծ թերացումներուն հետ: Այս յօդուածի հրապարակումէն ետք Տէր Պետրոսեանի շրջանակները ծանր մեղադրանքներ ընելով կը գրէին, որ սոյն մօտեցումին ձեռագիրը կը պատկանի ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի վերհսկողութեամբ գործող լրատուական եւ քաղաքական «աբարաթ»ին: Բնական է նաեւ, որ շատերու մտքին մէջ պիտի ուրուագծուէր որեւէ դժուար գիջումէ խուսափելու համար Նախագահ Սերժ Սարգսեանի հաւանական հրաժարականի հարցը եւ Մոսկուայի անվերապահ նեցուկով Ռոպերթ Քոչարեանի իշխանութեան վերադառնալու վարկածը:*

*Այս բոլորը բնականաբար անստոյգ տեղեկութիւններ են, սակայն ինչպէս նախորդ յօդուածիս մէջ նկատել տուած եմ, այսօր եւս կրկնելու գնով պէտք է ըսել, որ Երեւանի մէջ քաղաքական որեւէ խմորում ու հաւանական մագլցում անվերապահօրէն կապուած է ղարաբաղեան հիմնահարցի զարգացումներուն հետ: Բացորոշ է, որ Մոսկուա հակառակ պատերազմի դաշտէն եկած փոշիներուն եւ հողին վրայ թափուած սուղ արեան, մտադիր է հարցը լուծել շատ դանդաղ քայլերով, իսկ Արցախի մէջ երեւցող ներկայ փուլը յար եւ նման պիտի ըլլայ անցնող 1 Ապրիլէն առաջ եղած ընդհանուր վիճակին:*

*Հիմա հարց կը ծագի, թէ հայկական կողմը պատրա՞ստ է այս դանդաղ եւ սուղ արժող ոչ պատերազմ- ոչ խաղաղութիւն կանոնին, որուն ընթացքին ամէնօրեայ դրութեամբ կրակի տակ կը մնան ղարաբաղեան սահմանի բոլոր գիծերը եւ ամէնօրեայ դրութեամբ հայ զինուորներ կը զոհուին:*

## ՍԱՀԱԿԵԱՆԻ ՕՐ

Սահակեան Վարժարանի Սանուց Միութեան կազմակերպութեամբ աւանդութիւն դարձած «Սահակեանի Օր»ուան ընկերային հաւաքը տեղի պիտի ունենայ Կիրակի, 15 Մայիս, 2016, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Փասատինայի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ, 1060 North Allen Avenue, Pasadena CA 91104:
Կը խնդրուի յարգել Սահակեանցիի ժամադրութիւնը:
Ճոխ հիւրասիրութիւն, անակնկալներ...
Մուտքը ազատ

## ՀԱՅ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուածէջ 15–էն*

*ըլլալի փորձը խթան կը հանդիսանար Եկեղեցւոյ հոգեւոր եւ առողջ ընթացքին:*

*Տաճատ Ծ. Վարդապետ իր այս գիրքին մէջ յայտնի դարձուցած է երկուքին, խոկումին եւ աղօթքին, թէ՛ յարաբերութիւնը եւ թէ՛ գիրար լրացնելու անհրաժեշտութիւնը զոր Քրիստոսի Եկեղեցին ժառանգած է վանական կեանքէն: Աղօթքը շատ աւելի բարձր աստիճանի, անձնական եւ ուղղակի յարաբերութիւն մը ըլլալով Աստուծոյ եւ հաւատացեալին միջեւ, մինչդեռ խոկումը միջոցը կազմելով իրաւ աղօթաւորին համար: Հեղինակին խիտ եւ ուսանելի տողերէն կը յայտնուին երկուքին թէ՛ տարբերութիւնը եւ թէ՛ յարակցութիւնը, առանց աղօթքն ու խոկումը գիրար փոխարինելու վտանգին, այսինքն խոկալը բաւական ըլլայ, առանց անպայման աղօթելու:*

*Այս պարագան մերօրեայ ազատ մտածողութեան մէջ կորսնցուցած է իր աստուածաբանական որակը, եւ խոկացողը ինքնին կը բաւականանայ հաղորդակցելու իր անձին հետ միայն, ինչ որ թերի է եւ քմածին: Խոկումը անձին քննարկումն է, իսկ աղօթքը անձին դէպի Արարիչը դիմող պաղատանքն է: Մինչ խոկումը կը դատիարակէ, աղօթքը անպայման կ’առաջնորդէ եւ Աստուծմէ պատասխան կ’աղերսէ:*

*Այս բոլորը որպէս ծնունդ հին վանականութեան եւ յետագայի հայ վանքերու ուսումնական ուղիներուն, զարգացան մեր հին համալսարան-վանքերուն վաւերական ու պատմական գործընթացով՝ դարեր շարունակ: Բացառիկ այս հրատարակութեամբ Հայաստանեայց Եկեղեցին կ’օժտուի կարեւոր նեցուկով մը որուն կռթնած հայ հոգեւոր կեդրոններն ու հոգեւորականները, որքան որ անոնք «այժմէականացած» եւ այլափոխուած ըլլան նոյնիսկ, պիտի վերյիշեն վերադառնալ հոգեւոր արմատներուն: Գրելը մտքի եւ հոգիի ջերմ արգասիքն է, իսկ կարդալն ու սորվիլը՝ անոնց գիտական պտուղը:*

*Ջերմ շնորհաւորութիւններ Գիրքին եւ Հեղինակ՝ Տ. Տաճատ Ծ. Վարդապետ Եարտըմեանին եւ մեկենաս՝ Տիար Նազարէթ Գեւոնեանին:*

## ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՅԹՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

*Շարունակուածէջ 15–էն*

*ստանալու աւելի տեղեկութիւն Աստուածաշունչի բովանդակութեան եւ անոր Աստուածաբանական տուեալներու վրայ: Հետաքրքրական էր տեղացի չափահաս տիկնոջ մը ակնարկութիւնը: Նայելով Աստուածաշունչերուն եւ անոր կողքի այլ հրատարակչատան մը տաղաւարին վրայ ցուցադրութեան դրուած Քուրաններուն ըսաւ: «Այս մեծ վկայութիւն մըն է Պահրէյնի եւ բոլոր այցելուներուն՝որոնք կրնան տեսնել թէ կարելի է միասին ապրիլ»:*

*Դոկտ. Հրայր Ճէպէճեան, Ընդհանուր Քարտուղարը Աստուածաշունչի Ընկերակցութեան՝ունեցաւ յատուկ հարցազրոյց մը Պահրէյնի հեռատեսիլէն: Ան խօսեցաւ Աստուածաշունչի Ընկերակցութեան մասին նաեւ Աստուածաշունչ Մատեանի: «Աստուածաշունչը միայն Քրիստոնէական կրօնքին գիրքը չէ: Ան նաեւ մշակութային գիրք է որ համակեցութիւն կը քաջալերէ տարբեր կրօնքներու եւ ժողովուրդներու միջեւ» ըսաւ ան:*

*Դոկտ.Ճէպէճեան նաեւ շնորհակալութիւն յայտնեց Պահրէյնի պետութեան որ կը քաջալերէ միջ-կրօնական գոյակցութիւնը եւ հասկացողութիւնը: «Պահրէյնի թագաւորութիւնը այն երկիրն է ուր տարբեր ժողովուրդներ, մշակոյթներ եւ կրօններ միասին կ’ապրին համերաշխօրէն: Եւ ներկայ օրերուն մէջ՝մենք պէտք ունինք այս տեսակի օրինակելի համակեցութիւններու» ըսաւ ան:*

**Ն.Ս.Մ.Մ ԱՐՈՒԵՍՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ**

**Կը Կազմակերպէ**

**ԱՍՄՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ**

**Տարիքային Բոլոր Խումբերու Համար**

**Ղեկավարութեամբ՝**

**Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր, Ասմունքող Եւ Հեռուստալրագրող**

**ՆՈՒՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆԻ**

**Փորձերը տեղի կ՛ունենան ՀԿԲՄ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ 1060 N.Allen Ave. Pasadena .ca 91104**

**Արձանագրութեան Համար Դիմել՝**

**Տիկ. Արմինէ Լաչինեանին Հեռ. 626-372-4662**

**Պր. Յարութ Տէրվիշօղլեանին Հեռ. 323-351-8001**

# AGBU 110 YEARS

IN UNITY IS STRENGTH • ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է

# CALLING ALL ARTISTS

The Armenian General Benevolent Union's Western District Committee will be celebrating AGBU's 110th Anniversary on

**SUNDAY, MAY 1, 2016**
**5 PM - 9 PM**

We are excited to provide the opportunity for artists to display their work in our

**MIXED ART EXHIBIT**

All genres of art are welcome!
Interested? Go to
www.AgbuWesternDistrict.org/AGBU110
Submit your participation form by
4/18/16

@AGBU_WDC
#AGBU110

**THE REEF**
1933 S. BROADWAY
LOS ANGELES, 90007
Admission is FREE